№ 233 ՀԻՆԳՇԱԲԹԻ, 21 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ

1910

ԵՐԵՍՈՒՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՀԻՆԳՇԱԲԹԻ, 21 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ № 233

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն Тифлисъ, редакція «Мшакъ»
Сергіевская ул., № 5.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Խմբագրատան տելեֆոն № 253.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզվով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.
Խմբագրատան տելեֆոն № 253.

ՄՇԱԿ

Հասցէն. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
TIFLIS, Rédaction «MSCHAK».

ՆՈՅԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ
2 ՌՈՒԲԼԻ

12 ամսվ.՝ 10 ր., 6 և 7 ամսվ. 6 ր., ամսակ. 1 ր. Ամերիկա՝ տարեկան 6 դոլլար, Եւրոպա՝ 32 ֆր., Պարսկաստան՝ 10 ր., Թիւրքիա՝ 120 ղրուշ: Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն, նոյնպէս և 40 կոպ. (կարելի է և նամականիշով):

Յայտարարութիւնների համար վճարում են. 1 երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին 20 կոպ., վերջին երեսի վրա՝ 10 կոպ.: Կովկասից դուրս. յայտարարութիւնները ընդունվում են բացառապէս Торг. Домъ „Л. и Э. Метцль и Кº“ ֆիրմայի միջոցով Մոսկվայում, Պետերբուրգում և Վարշավայում:

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԻ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

„ԱՂԲԻՒՐԻ“ և „ՏԱՐԱԶԻ“ խմբագրութիւնը տեղափոխվել է Елизаветинская № 39, Նորակառոյց հոյակապ տուն պ. Ալ. ՋԱՂԻԹԵԱՆԻ:
ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ՍԱԼՈՆԻ և ՄԱՄՈՒԼԻ ԲԻՒՐՈՅԻ մասին՝ կը յայտարարվի, երբ կազմ և պատրաստ կը լինի բնակարանը:
(Ն. Կ.) (առ.) 1188. 2—1

ԿԵՂԾՈՒՄՆ
ՍԻՄՊԱՏԻԱՅԻ

ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄՆ
„Սիմպատիա“
պապիրոսների դափնիները հանգիստ չեն տալիս մեր մրցակիցներին և ստիպում են նրանց
ԿԵՂԾՄԱՆ ԴԻՄԵԼ
Այսպէս՝ տեղական մի ծխախոտի գործարան, ամերիկական ամեն տեսակ ռեկլամներից յետոյ, որոնք երևի չօգնեցին, այս օրերս բաց է թողել գլանակներ մեր էտիկէտով և
„ՍԻՄՊԱՏԻԱ“
անունով, գինն էլ մեզ պէս նշանակել է
10 հատի համար 6 կոպէկ:
Այս գլանակները (պապիրոսները) մերիններին մեծ նմանութիւն ունեն թէ արտաքին տեսքով և թէ մեծութեամբ: Այդ պատճառով
Ն. Ի. ԲՕԶԱՐՋԵԱՆՑ ԵՒ ՈՐԴԻՆԵՐԻ
Ա./Ը. խնդրում է ծխողներից ուշադրութիւն դարձնել առանձնապէս գործարանային դրոշմի և ազգանուան վրա:
Ն. Ի. ԲՕԶԱՐՋԵԱՆՑ
ԵՒ ՈՐԴԻՔ
(Ն. Կ.) առ. 1189. 2—1

„ԼԵՕՆ“
«Кавказское Товарищество»-ի շարքում
Գանովսկայա փողոց, № 7.
Վերադարձել է ամառանոցից և վերսկսել է
ՄԵԾԱԴԻՐ ՊՈՐՏՐԵՏՆԵՐԻ
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ
ԳՆԵՐԸ ՇԱՏ ՄԱՏՉԵԼԻ ԵՆ
Նոյն արուեստանոցում ընդունվում են շրջանակների պատուէրներ և տեղական պ. պ. լուսանկարիչ և սիրող լուսանկարիչներից ռետուշի գործ, նեգատիվ և պօզիտիվ: Արտաքաղաքային պատկերների համար դիմեն հետևեալ հասցէով Тифлисъ, Гановская ул. № 7. Художественное портретное Ателье „Леонъ“. Леону Теръ-Григорянцу.
(Ն. Կ.) առ. 1187. 2—1

ՊԱՍՏԱՌՆԵՐ
(ОБОИ)
ԵՂԲ. ՏԱՐՆՈՊՈԼ
ՖԱԲՐԻԿԱՅԻ
8 կ. սկսած մինչև 6 ր. իւրաքանչիւր փաթեթը (բուլօ):
Ունի պահեստներ Ռուսաստանի բոլոր մեծ քաղաքներում:
ԲԱԺԱՆՄՈՒՆՔԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ
Գօլովինսկի պր., 21, Արտիստ. Ընկ. շինութ.
Տելեֆօն № 355.
ԳՆԵՐԸ ՖԱԲՐԻԿԱՅԻՆ
ՆՄՈՒՇՆԵՐԸ ՁՐԻ
(Ն. Չ.) (առ.) 310. 63—60

ԲԺԻՇԿ
Վ. ԱՐԾՐՈՒՆԻ
Վերադարձել է և վերսկսել
հիւանդների ընդունելութիւնը
Առաւօտեան 9—1 ժամը.
Երեկոյեան 5—7 ժամը.
Վելիամինովսկայա փ. № 13, տ. Սէյլանովի, 3-րդ գիմնազիայի կողքին:
(Օ. Մ.) առ. 1156. 10—6

ԽՈՇՈՐ ԽՆԴԻՐ

Այս անգամ ռուսական պարլամենտի նստաշրջանը սկսվում է կարևորագոյն խոշոր մի խնդրի քննութեամբ:

Դա դպրոցական նախնական կրթութեան խնդիրն է, որ գրաւել է Պետական Դումայի լուրջ ուշադրութիւնը:

Հիմնական, էական, պատասխանատու մի խնդիր:

Այդ խնդրի քննութեան առիթով արտասանված առաջին ճառերից արդէն երևում է, որ կրթութեան կազմակերպութեան վերաբերութեամբ ռուսական ազգային ժողովը ունենալու է մեծ պայքար:

Այն հայեցակէտները, որոնք պարզվում են ճառախօսութիւններից, նշանակութիւն ունեն թէ ընդհանուր պետական դպրոցական խնդրի լուծման և թէ զանազան ազգութիւնների ու դաւանութիւնների վերաբերեալ կրթական կազմակերպութեան ծրագիրները մշակելու համար:

Եւ եթէ Պետական Դումային չաջողվի գոհացում տալ կրթական գործի առիթով եղած յոյսերին ու սպասելիքներին, զգալի հարուած տրված կը լինի Դումայի բարոյական վարկին ազգաբնակութեան շրջաններում:

Դպրոցական գործը չափազանց փափկանկատ կողմեր ունի, որոնց բաղդն ու վիճակը արմատական նշանակութիւն ունեն ազգաբնակութեան ակնկալութիւնների համար զանազան խաւերում:

Պետական Դուման տրամադիր է մեծ գումարներ յատկացնել ժողովրդական լուսաւորութեան համար—այդ անկասկած վերին աստիճանի սփոփիչ և մխիթարական մի հանգամանք է: Պետական Դուման կամենում է հարթել ճանապարհները մտցնելու հանրային գրագիտութիւն ամբողջ պետութեան մէջ—դա անշուշտ գերագոյն իղձերից մէկի կատարման նախադուռն է:

Բայց այդ կատարելու համար կարևոր է, որ բացի պետական ղեկավարող աջակցութիւնից և դրամական նպաստներից, եռանդուն օգնութեան գայ հասարակութիւնը իր բոլոր ոգևորութեամբ, ամբողջ ազգաբնակութիւնը իր կուլտուրական ույժերով:

Եւ ահա այստեղ հարց է ծագում, թէ արդեօք Պետական Դումային կաջողվի՞ մի այնպիսի կազմակերպութիւն տալ դպրոցական գործին, որ սա դէպի ինքը գրաւէր մի կողմից հասարակութեան ստեղծագործող, շինարար և ղեկավար ույժերը, իսկ միւս կողմից տեղական միջոցները՝ ընդարձակելու դպրոցական ցանցը և ամրացնելու նրա յարատև ու բեղմնաւոր գործունէութիւնը:

Մենք դժբաղդաբար մերձաւոր անցեալում ականատես ենք եղել շատ և շատ դառն փորձերի և երևոյթների, երբ դպրոցական գործը ոչ միայն չէ ստացել բաւարար կազմակերպութիւն իրականութեան մէջ, այլ նա աւելի ևս յետ է գնացել և կորցրել է հասարակութեան համակրութիւնը դէպի ինքը: Մենք տեսել ենք, թէ ինչպէս կրթութեան շուրջը հաւաքվել և խտացել են չարագուշակ ամպեր, որոնք վէճ և թշուառութիւններ են ստեղծել այնտեղ, ուր մարդիկ պէտք է բերկրանքով լցվէին ժողովրդական կրթութեան խոշոր խնդիրը առաջ տանելու համար:

Եւ անտարակոյս, այժմ հասարակութիւնը միայն մի տենչ ունի դէպի այն դպրոցական քննութիւնը, որ կատարվում է Պետական Դումայում, այն է, որ պետութեան և ժողովրդի համար թանգագին և կարևորագոյն այդ խնդիրը ստանար բաւարար լուծում, վերջ տալով եղած թիւրիմացութիւններին և հարթելով ճանապարհներ դէպի ժողովրդական կրթութեան ընդարձակ կազմակերպութիւնը ազգաբնակութեան համերաշխ գործակցութեամբ:

Ա. Քալանթար

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

Լոնդոն, 19 հոկտեմբերի

Ռէյտերը հաղորդում է, որ անգլիական «Ֆոկս» ականանաւից Պարսից ծոցի Լինգահ քաղաքում զօրախումբ ափ իջեցնելը կատարվել է պարսից փոխ-նահանգապետի և անգլիական հիւպատոսի խնդիրքով քաղաքի պաշտպանութեան համար: Ականանաւից իջեցրել են 4 թնդանօթ:

Պարսից կառավարութեանը նախազգուշացվեց, որ պատասխանատու կը լինի այն վիրաւորանքների և վնասների համար, որ ստացան անգլիահպատակները Շիրազի անկարգութիւնների ժամանակ:

Նասր-ուլ-Մուլքը մեկնեց Պարսկաստան ստանալով Թեհրանի կուսակցութիւնների պարագլուխներից հաւաստիացումներ՝ թէ նրա ընտրութիւնը եղել է առանց կուսակցական նկատումների: Ճանապարհին նա մի շարք այցելութիւններ կը գործէ: Նա գտնվում էր Լոնդոնում բացառապէս որդու հիւանդութեան պատճառով: Նրա Բերլին գնալու մասին ոչինչ յայտնի չէ: (Հ. Գ.)

Թեհրան, 19 հոկտեմբերի

Ի նկատի ունենալով, որ պարսից կառավարութիւնը յամառ կերպով խուսափում է Մահմեդ-Ալի շահին հերթական թոշակը տալուց, ռուսական և անգլիական դեսպանները ներքին գործերի մինիստրի մօտ ուղարկեցին 2 ղուլամների, պատուիրագրելով վճարել փողերը: Երեք օր ղուլամները ստուերի նման հետևում էին մինիստրին, յիշեցնելով իր պարտքի մասին: Փողերը յանձնվեցին միայն երէկ, այն էլ շատ ուշ:

Բախտիարները գրաւեցին Ղօշանը: Նաիբ Հիւսէյնը փախաւ:

Դինգի անկարգութիւնները զսպելու համար ուղարկվեց մի զօրախումբ չորս թնդանօթներով: (Հ. Գ.)

Թաւրիզ, 19 հոկտեմբերի

Արդաբիլից ռուս կօզակների պաշտպանութեամբ եկաւ երկրորդ կարաւանը 150 ուղտերով՝ ռուսական ապրանքներով:

Պաշտօնանկ արված ոստիկանապետի տեղ նշանակվում է Մուքերրէմուս-Սալթանէն Թեհրանից: (Հ. Գ.)

Ուրմիա, 19 հոկտեմբերի

Խօյից հաղորդում են, որ թիւրքերը առաջարկեցին յայտնի աւազակին(?) գրաւել սահմանակից Կոտուր գաւառը և յայտարարել նրան թիւրքական հողաբաժին՝ խոստանալով դրա փոխարէն կառավարիչ կարգել նրան ցմահ: Այդ առիթով տեղի ունեցած գրագրութիւնը պարսիկները ձեռք ձգեցին: Բերլինի 1878 թւի կոնգրէսը Կոտուրը յանձնեց Պարսկաստանին:

Մի քանի ղարափափախ իշխաններ, նեղվելով թիւրքերից, Սուլդուզից փախան Ուրմիա: Սուլդուզեցի խաների մէջ նկատվում է հակաթիւրքական յուզմունք:

Նօվչինի չէյխ Տախի կարգադրութեամբ քարուքանդ արին շէյխի եղբայր Ռաշիդի կալուածքը: Սպանված են մի քանի գիւղացիներ: Ռաշիդը և նրա կալուածքի քիւրդ ազգաբնակութիւնը դիմեցին ռուսաց հիւպատոսին օգնութիւն խնդրելով: (Հ. Գ.)

Լոնդոն, 13 հոկտեմբերի

Լրագիրները ոգևորութեամբ խօսում են Պարսկաստանի տուած պատասխանի վերաբերմամբ բրիտանական յայտագրին և այն ճառերի մասին, որոնք խօսվեցին Կ. Պոլսի միտինգում Օդէօն թատրոնում:

«Times» լրագիրը խստութեամբ քննադատում է Պարսկաստանի պատասխանը և լրջութեամբ նախազգուշացնում է վերջինին: Լրագիրն ասում է, որ Անգլիան չի յապաղի ի կատար ածել իր սպառնալիքը, եթէ Պարսկաստանը երեք ամսվայ ընթացքում չը վերականգնէ կարգը: Լրագիրը

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԿԻՆԸ ԵՒ ՆՐԱ ԱՊԱԳԱՆ*)

(Սօցիալ-տնտեսական էտիւդ)

Թէպէտ Ֆր. Էնգէլսը կարծում է, թէ մարդկային կեանքում տեղի ունեցած յեղաշրջումների մէջ մայրական իրաւունքի ոչնչացման ակտը չէր կարող մի առանձին դիմադրութեան հանդիպել, մեզ սակայն թւում է, թէ հարցի մինչև վերջնական լուծումը որոշ ընդհարումներ, ճգնաժամեր անշուշտ տեղի են ունեցել: Զէ՞ որ մի կողմից շօշափվում էր մայրական գերիշխանութեան ոչնչացման խնդիրը, իսկ միւս կողմից՝ տղամարդու-հօր նախկին ժառանգների—քոյրերի, եղբայրների և նրանց ժառանգների—տնտեսական շահերը:

Յամենայն դէպս յեղաշրջումը տեղի ունեցաւ. և տղամարդու ժառանգները եղան իր զաւակները. մայրական գծով ժառանգելու հարցը մէջտեղից վերացաւ:

Եւ «մայրական իրաւունքի ոչնչացումը՝ կնոջ համաշխարհային-պատմական պարտութիւնն էր», ասում է—Էնգէլսը: Ակնյայտնի էր, որ մայրական իրաւունքի բնորոշ յատկանիշներից մէկն էր կօմմունական կեանքը. ընդհանուր բնակարաններ, ընդհանուր աշխատանք և ընդհանուր գործադրում արդիւնքի՝ փոխադարձ ամենապարզ, պրիմիտիվ յարաբերութիւններով—ահա երևոյթներ, որոնցով կարելի է բնորոշել մայրիշխանութեան կօմմունիզմը:

Տղամարդու տիրապետութիւնը հիմնովին տապալեց այն և տեղը կառուցեց մասնաւոր սեփականութեան համաշխարհային-պատմական այնպիսի սօցիալական մի չարիք, որ մարդկային ապագայ պատմական կեանքի երկար ժամանակաշրջանը խճողեց բազմաթիւ ողբերգական հակասութիւններով: Տղամարդուն՝ իբրև դրութեան ընդհանուր տիրապետութեամբ՝ կինը ստորադրվեց, անագորոյն պայմաններում ստրկօրէն հպատակվեց, դարձաւ անբարբառ աղախին իր ամուսնու առջև, համրօրէն հնազանդվելով տղամարդու բոլոր պահանջներին: Եւ կնոջ դրական գործունէութեան միակ ասպարէզը համարվում էր ծննդաբերութիւնն ու սեռական կեանքի օբյեկտիվացիան լինելը, որի տեսակէտից միմիայն տղամարդու առջև արդարանում էր կնոջ գոյութեան ամբողջ իրաւունքը…

Տղամարդու տիրապետութեան առաջին արտայայտութիւնը՝ նահապետական միահեծան ընտանիքի կազմն էր, որը, ըստ Ֆր. Էնգէլսի, ներկայացնում էր պատահական և միակին ընտանիքի միջին ձևը, որից յետոյ աստիճանաբար զարգանում է միակնութիւնը, մօնօգամիան:

Այս տիպի գերդաստանը իր մէջ էր ամփոփում միահեծան նահապետի կնոջը, երեխաներին և ստրուկներին, բերև միևնոյն կատեգորիայի անհատներ, որոնց վրա նա տարածում էր իր անսահման գերիշխանութիւնը սովորական պատիժներից սկսած մինչև jus vitae ac necis—կեանքի և մահվան իրաւունքը: Նահապետական այս տիպի գերդաստանը վերին աստիճանի նախանձախնդիր էր ժառանգների օրինաւորութեան, հարազատութեան նկատմամբ և այդ պատճառով կնոջ վրա բարդված էին ամուսնական հաւատարմութեան անխախտելի պահանջներ՝ օտար, ապօրինի ժառանգներից խուսափելու դիտաւորութեամբ: Եւ ընդհանրապէս պէտք է շեշտել, որ կնոջ վերաբերմամբ դրված նահապետական այսօրինակ արգելքը—անձեռնմխելիութիւնը—գրեթէ նոյն բնաւորութիւնն ունէր, ինչ որ նրա տնտեսական ինվենտարը. անձեռնմխելի էր կինը, անձեռնմխելի էր նոյն կերպ նաև նրա մասնաւոր սեփականութիւնը: Սրան անհերքելի ապացոյց կարող է լինել այն հանգամանքը, որ գերդաստանի, ընտանիքի գաղափարը մեր յիշած էպօխայում կազմում էր կնոջ, երեխաների, ստրուկների և մասնաւոր սեփականութեան անբաժան ամբողջութիւնը: Հռոմէական «familia» տերմինը իր վաղեմի գաղափարը կորցրել է. նա համապատասխան չէր մեր «ընտանիք» հասկացողութեանը: «Famulus» նշանակում էր ստրուկ, իսկ «familia»՝ միևնոյն տիրոջ պատկանող ստրուկներ: Ապագայում սակայն այդ տերմինը գործածվում էր տիրոջ ամբողջ սեփականութեան նկատմամբ: Մի կողմից կինը լոկ մասն էր սեփականութեան, միւս կողմից գործիք ծննդաբերութեան:

Հռոմէական նշանաւոր իրաւաբան Գայի ձևակերպումը պարզապէս ցոյց է տալիս, որ familia it est patrimonium-ը՝ կտակով անցնում էր յետագայ սերնդին, իսկ Կվինտիլիանի ձևակերպումով՝ կնոջ դերը կայանում էր ծննդաբերութեան մէջ բացառապէս՝ liberorum quaerendorum causa…

Եւ այսպիսի գերդաստանի բնորոշ յատկանիշն էր նախապատմական Հռոմում անսահման կղզիացումը. գերդաստանի անդամը ամենաբացառիկ դէպքում միայն նահապետի թոյլտուութեամբ կարող էր դուրս գալ իր կազմակերպութիւնից: Տղամարդկանց կողմից ընդհանուր ծագում ունեցող այդ կղզիացած միութիւնը իր մէջ անշուշտ բովանդակում էր քաղաքական նախնական կազմակերպութեան պարզ և հասարակ գծերը:

Գերդաստանի գլուխն էր համարվում pater-ը կամ magister-ը՝ նահապետը: Գերդաստանների միութիւնը՝ gens-ը ունէր իր սովորոյթներն ու ստատուտները՝ mores, statutagentis, ժողովները՝ conciones, որոնք ազգակիցների նկատմամբ յայտարարում էին պարտադիր որոշումներ՝ lex gentis ևայլն:

Այս հիման վրա յիշատակված էպօխաներում ամուսնական ակտերը կատարվում էին որոշ ձևականութիւններով և կրում էին հրապարակական բնաւորութիւն: Ամուսնական պատրիցիական նախնական ձևն էր Confarreatio-ն, որի բնորոշ գիծն էր ակտի ժամանակ հրաւիրել որոշ թւով վկաներ, որից յետոյ կինը պարտաւոր էր թողնել իր հօր familia-ն և փոխադրվել իր ամուսնու sacrorum communio-ն: Առաւել ընդհանուր, նաև պլեբէյների համար ընդհանրած էր ամուսնական ակտի մի այլ ձևականութիւն, որ կոչվում էր coëmptio. Այս դէպքում աղջիկը ներկայանում էր գնման և վաճառման մի օբյեկտ, որը սակայն կատարվում էր երկու նահապետների միջև՝ անկախ երիտասարդի կամ աղջկայ համաձայնութիւնից*):

Այսպէս, ուրեմն, նկատելի երևոյթներից հռոմէական հին familia-ի մէջ ամենաբնորոշն է՝ կնոջ ամեն իրաւունքից զրկված լինելը:

---

*) Տես «Մշակ» № 232.

*) Պրոֆ. Նիկօնով. «Հռոմէական իրաւունքի պատմութիւնը»:

արհամարհանքով ծաղրում է Կ. Պոլսի ճառերի բովանդակութիւնը, նոյնպէս և գերմանական մամուլի վերաբերմունքը դէպի նրան։ Լրագիրն աւելացնում է, որ Գերմանիան ոչ մի առնչութիւն չունի դէպի իսլամը դաւանող ժողովուրդները։ «Պարսկական հարցը,—ասում է լրագիրը,—շօշափում է բացառապէս Անգլիայի և Ռուսաստանի շահերը»։

«Daily News» լրագիրը, արմատականների օրգանը, հանդէս եկաւ նոր յարձակումներով Էդուարդ Գրէյի քաղաքականութեան դէմ։ Լրագիրը դիմում է հասարակական կարծիքին և եռանդով պահանջում է, որ ռուսաց զօրքերը անյապաղ յետ կանչվեն Պարսկաստանի հիւսիսից։ Լրագիրը կրկնում է ցամաքային սահման ստեղծելու վտանգը Ռուսաստանի և Անգլիայի միջև և համաձայնվում է Կ. Պոլսի ճառերի բովանդակութեան հետ։ Վերջում յայտարարում է, երաշխաւորելով ճշդութիւնը, որ արտաքին գործերի մինիստրութիւնը ցաւում է արած քայլի մասին։

—

Կ. Պոլիս, 13 նոյեմբերի

Բ. Դուռը հաւաստիացումներ ստացաւ անգլիական արտաքին գործերի մինիստրութիւնից, որ Անգլիան մտադրութիւն չունի բաժան-բաժան անել Պարսկաստանը։ Նրա միակ նպատակն է պաշտպանել առևտուրը Բուշիր-Սպահան գծի վրա։ Այդ շրջանում ժանդարմերիա կազմակերպելու համար կը նշանակվեն 10 անգլիական օֆիցերներ, որոնց ռոճիկ կը տրվի Բուշիրի մաքսատան եկամուտներից։ Դա հասարակ ոստիկանական միջոց է,—ասված է անգլիական հաղորդագրութեան մէջ.—լրագիրները խիստ ուռեցրին հարցը։ («P. C.»)

—

Բեռլին.—Լրագիրները հաղորդում են Կ. Պոլսի միտինգի Վիլհելմ կայսրին ուղարկած հեռագրի բնագիրը։ Մամուլի մի մասը այն միտքն է յայտնում, որ այդ հեռագիրը բաց է անում Գերմանիայի համար լայն հեռանկարներ Արևելքում, իսկ միւս մասը վերաբերվում է նրան ձեռնպահութեամբ, ցոյցը գործելակերպ համարելով միայն։ «Vossische Zeitung» լրագիրը կարծում է, որ Պիշօնի ֆինանսական քաղաքականութիւնը ծանր պարտութիւն կրեց, որը կազդէ Ֆրանսիայի պրէստիժի վրա Արևելքում։ Երեքպետեան համաձայնութիւնը, չը կարողանալով քննութեան դիմանալ բօսնիական ճգնաժամի ժամանակ, շարունակում էր քաղաքական և ֆինանսական սխալներ անել և իր դէմ գրգռեց ամբողջ մահմեդական աշխարհը։ Լրագիրը հեգնում է, որ երիտասարդ սահմանադրական երկիրներ Պարսկաստանը և Թիւրքիան սխալվեցին, սպասելով ամենից շատ աջակցութիւն գտնել Անգլիայի և Ֆրանսիայի կողմից, որոնց ազատամտութիւնը սակաւ է տարբերվում ռուսական աւանդութիւններից։

Անգլիական ազատամիտ մամուլը վշտացած է ֆրանս-թիւրքական համաձայնութեան անյաջողութիւնից փոխառութեան մասին։ «Morning Leader» լրագիրը պարսկական գործերի առիթով դատապարտում է Անգլիայի դաշնակցութիւնը Ռուսաստանի հետ։ («P. B.»)

—

Բեռլին, 13 նոյեմբերի

«Berl. Tageblatt» լրագիրը հաղորդում է, որ Բեռլինում սպասվում է Թէհրան գնացող պարսկական խնամակալը։ Նա խօսակցութիւն կունենայ արտաքին գործերի մինիստր Կիդէրլէն-Վեխտէրի հետ։ «P. C.»-ի թղթակիցն իմացել է, որ խնամակալի այցելութիւնը կապ ունի այն կոնցեսիաների հետ, որոնք կը տրվեն Գերմանիային, և պարսկական հնարաւոր փոխառութեան հետ։

—

Բեռլին.—Անգլիական լրագիրների մեծամասնութիւնը անհանգստութեամբ շարունակում է քննադատել անգլիական կառավարութեան պարսկական յայտագիրը, սակայն յոյս է յայտնում, որ երեք ամսվայ ընթացքում հնարաւոր կը դառնայ խաղաղ կերպով կարգադրել հարցը։ Լրագիրները մատնացոյց են անում, որ ուլտիմատումը շօշափում է ամբողջ մահմեդական աշխարհի շահերը, որի առաջնապահ գունդն է Թիւրքիան, ուստի հակաբրիտանական ցոյցը Կ. Պոլսում չափազանց լուրջ փաստ է։

(«P. B.»)

—

Բեռլին, 15 (28) նոյեմբերի—«Tägl. Rundschau» լրագիրը, լոնդոնեան յատուկ աղբիւրից ստացված տեղեկութիւնների հիման վրա, հաւատացնում է, որ անգլիական յայտագիրը Պարսկաստանին ուղղված է, գլխաւորապէս, Ռուսաստանի դէմ։ Անգլիան չափազանց դժգոհ է իբր թէ Պետերբուրգի քաղաքականութեամբ և դիտաւորութիւն ունի առաջն առնել հիւսիսային Պարսկաստանի գրաւման։ Լրագիրը հաւատացնում է, որ Անգլիայում նախապատրաստվում է սենսացիոն փոփոխութիւն արտաքին քաղաքականութեան մէջ։

Նոյն լրագրում կոմս Պֆէյլ, ողջունելով թիւրքական փոխառութիւնը և գերմանական ազդեցութեան զօրեղանալը Թիւրքիայում, խորհուրդ է տալիս բարեկամանալ մահմեդական աշխարհի հետ, օգնել Պարսկաստանին, պաշտպանել նրա անձեռնմխելիութիւնը և չը թոյլատրել անգլօ-ռուսական կամայականութիւնը, որ խախտում է ուրիշ պետութիւնների շահերը։

(„P. C.“)

—

Բեռլին, 15 (28) նոյեմբերի։ Լուրերի համեմատ, Պարիզի գերմանական դեսպան Շէնին յատուկ յանձնարարված է համոզել Ֆրանսիային միջնորդի դեր ստանձնել պարսկական և Մերձաւոր Արևելքի հարցերում։ Դեսպանին առաջարկված է ամեն միջոցով Ֆրանսիայի համաձայնութիւնն առնել հնարաւոր կոնֆլիկտի առաջն առնելու համար։ (P. C.“)

—

Թէհրան, 15 (28) նոյեմբերի.—Հազար մարդ կառավարութեան թոշակաւորներ և մինիստրութիւնների պաշտօնեաներ, որոնց մերժվեց թոշակներ տալ, բաստ նստեցին մզկիթում։ („P. C.“)

ԲԱԼԿԱՆԵԱՆ ԹԵՐԱԿՂԶՈՒՄ

—

Բուխարեստ, 19 նոյեմբերի

«Կոնսէրվատորուլը» թիւրք-ռումինական պայմանագրի առիթով գրում է. «Ռումինիան և Թիւրքիան ցանկանում են status quo-ն պահպանել Բալկանում։ Երբ Բուլղարիան և Յունաստանը կը կամենան փոխել թերակղզու քարտէզը, նրանք կը հանդիպեն դիմադրութեան այդ երկու պետութիւնների կողմից։ Որպէսզի մեզ վախեցնեն, ասում են՝ իբր բալկանեան չորս պետութիւններ դաշինք են կապել Թիւրքիայի և Ռումինիայի դէմ։ Այդ դաշինքը չէ կարող հանդէս բերել 500,000-ից աւելի մարդ, իսկ Թիւրքիան կարող է գործի հանել 700,000, Ռումինիան՝ 300,000 մարդ։ (Հ. Գ.)

—

Բելգրադ, 19 նոյեմբերի

Գահաժառանգի տաքութիւնը առաւօտեան 37,7° էր, զարկերակը՝ 86. հազը պակասում է։ (Հ. Գ.)

—

Սոֆիա, 19 նոյեմբերի

«Պրեպորէց»-ը մեծ յոյսեր է դնում Օդեսսայում փակված առևտրա-արդիւնաբերական համագումարի վրա այն մտքով, թէ կը լուսաբանվեն ռուս-բուլղարական յարաբերութիւնների համար անհրաժեշտ պայմանները։ (Հ. Գ.)

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Բեռլին, 19 նոյեմբերի

Արտաքին գործերի մինիստրութեան կառավարիչ Սազօնովը եկաւ և այսօր մեկնում է Դարմշտադտ։ «Բեռլինէր-Լոկալ-Անցեյգեր»-ը, զետեղելով Սազօնովի լուսանկարը, համակրական դարձուածքներով ողջունում է նրան և մատնանիշ է լինում նրա դիպլօմատիական աչքի ընկնող ընդունակութիւնների և վառ հայրենասիրութեան վրա, որի պատճառով երկրի բարիքը հանդիսանում է նրա քաղաքականութեան գլխաւոր ուղղիչ թելը. Սազօնովը ձգտելու է պահպանելու տրադիցիոն բարի-հարևանական յարաբերութիւնները Գերմանիայի հետ. նորմալ յարաբերութիւնների պահպանութիւնը Աւստրիայի նկատմամբ հանդիսանում է մինիստրի էական քաղաքական խնդիրը։

«Կեօլնիշէ-Ցայտունգը» ողջունում է կայսրի տեսակցութիւնը Վիլհելմ կայսրի հետ, իբրև ուրախալի ապացոյց այն բանի, որ երկու միապետների յարաբերութիւնները չափազանց լաւ են և որ Ռուսաստանը գնահատում է այդ յարաբերութիւնների շարունակութիւնն ու պահպանութիւնը։ Լրագիրը կարծում է, թէ օգտակար կը լինի՝ եթէ Սազօնովը օգտվի Պոտսդամում եղած միջոցին՝ մօտիկից ծանօթանալու համար գերման գործիչների հետ և անձնական տպաւորութիւնների հիման վրա ուրոյն կերպով պատկերացնէ Գերմանիայի իրերի իսկական դրութիւնը։

Կրօնպրինցը կնոջ հետ վաղը մեկնում է Գենուա և կը մնայ այնտեղ ծպտեալ կերպով երեք շաբաթ։ Կրօնպրինցուհին ապա կը մեկնէ հայրենիք, իսկ կրօնպրինցը կատարելու է երկար ճանապարհորդութիւն, որտեղից կը վերադառնայ մայիսի կէսերին Սիբերի վրայով։ (Հ. Գ.)

—

Բեռլին, 19 նոյեմբերի

Ի պատիւ Սազօնովի տրված ճաշին ռուսաց դեսպանի մօտ ներկայ էին Բէտման-Գօլվէգը և Կիդէրլէն-Վէխտէրը։ (Հ. Գ.)

—

Պարիզ, 19 նոյեմբերի

Յորդ անձրևների պատճառով ջուրը Արտէշ դեպարտամենտի շատ գետերում և ջրանցքներում չափազանց բարձրացաւ։ Երթևեկութիւնը շատ երկաթուղագծերի վրա անհնարին է. վնասները խոշոր են։ Ռօնա և Գար գետերը դուրս են եկել իրանց ափերից։ (Հ. Գ.)

—

Նիւ-Եօրկ, 19 նոյեմբերի

Բեռնակիրների գործադուլը աճում է։ Տեղի են ունենում լուրջ անկարգութիւններ։ (Հ. Գ.)

—

Խարբին, 19 նոյեմբերի

Խունխուզները նորից յարձակվեցին «Եաբլօնիա» կալուածքի վրա, հրդեհեցին երկու բարակներ և քշեցին բանուորներին։

Կորէային սահմանակից Ցիւկցիցզէ քաղաքում 50 ոստիկաններ շրջապատեցին ճապօնական մի ճաշարան։ Հանդիպելով դիմադրութեան, նրանք կրակ բացին ատրճանակներից, վիրաւորեցին մի քանի ճապօնացիների, երեքին կալանաւորեցին։

Տումանցզան սահմանակից գետի վրա չինական ոստիկանութիւնը փորձեց քննել ճապօնական պօստը, ծեծեց պօստապահներին։ (Հ. Գ.)

ԹԻՒՐՔԱԿԱՆ ԲՈՂՈՔԻ ԺՈՂՈՎԸ ԱՆԳԼԻԱՅԻ ԵՒ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԷՄ

—

Գերմանական լրագիրները հետևեալ մանրամասնութիւններն են հաղորդում բողոքի ժողովի մասին անգլօ-ռուսական քաղաքականութեան դէմ Պարսկաստանում, որ կազմել էին Օդէօն թատրոնի դահլիճում Կ. Պոլսում տեղական պարսկական գաղութի նախաձեռնութեամբ։ Ժողովը, որպէս արդէն հաղորդեց հեռագիրը, ցոյցի փոխվեց Անգլիայի և Ռուսաստանի դէմ ի նպաստ Գերմանիայի։

Թուրք Աղայեվ, որպէս ժուռնալիստ, որը յայտնի է Կ. Պոլսում իր կրքոտ կռւով ռուսական քաղաքականութեան դէմ, յայտնեց, որ Թիւրքիան չէ կարող անտարբեր վերաբերվել Անգլիայի և Ռուսաստանի գործունէութեան «յափշտակման եղանակին» Պարսկաստանում։ Մի ուրիշ հռետոր, Նաղիբ-բէյ, ասաց, որ Անգլիան հրաժարվեց իր նախկին մարդասիրական քաղաքականութիւնից այն օրը, երբ համաձայնութիւն կապեց Ռուսաստանի հետ իսլամի դէմ։ Ապա հետևեալ ճառերում մատնացոյց էր արվում, որ Անգլիայի և Ռուսաստանի նկրտումների դէմ ամբողջ աշխարհի մահմեդականները ունեն զօրեղ պաշտպան յանձին գերմանական կայսրի, որը պաշտպան է կանգնում նրանց ամեն տեղ, լինի նա Բօսֆորում, Մակեդոնիայում կամ Մարօկկոյում։ Միայն երեքպետեան դաշնակցութեան մէջ, հռետորի խօսքով, Թիւրքիան կարող է գտնել ապաւէն և աջակցութիւն։ Ժողովի վերջը առաջարկութիւն եղաւ Վիլհելմ II-ին ուղարկել հեռագիր, որի մէջ, յիշատակելով մինչև այժմ մահմեդականներին նրա մատուցած ծառայութիւնները, յոյս է յայտնվում, որ նա չի թոյլ տայ Պարսկաստանի բաժան-բաժան անելը։ Առաջարկութիւնն ընդունվեց բարձրաձայն բացագանչութիւններով ի պատիւ Գերմանիայի, և Ռուսաստանի ու Անգլիայի դէմ։ Ժողովին ներկայ էին թիւրքական շատ օֆիցերներ։

«Р. Сл.» լրագրի թղթակիցը հետևեալ կերպով է նկարագրում այդ միտինգը։

«Հեռագիրներից արդէն յայտնի է այն միտինգի մասին «Օդէօն» թատրոնում, ուր Վիլհելմ կայսրը, որը մի ժամանակ գտաւ «դեղին վտանգը», փառաբանվում էր որպէս մահմեդականութեան պաշտպան։

«Միտինգը շարունակվեց հինգ ժամ։ Հանդէս եկան շատ հռետորներ, որոնց մէջ կային և աչքի ընկնող քաղաքական գործիչներ։ Ռուսաստանցի Թուրք Աղայեվը, որը անուն է հանել որպէս հրապարակախօս և Ռուսաստանի հակառակորդ, Թիւրքիայի և Եւրոպայի միջև եղած փոխադարձ յարաբերութիւնների պատմական տեսութիւնն արեց։ Ահա այդ տեսութեան կարճ բովանդակութիւնը. Եւրոպան իր քաղաքակրթութիւնն ստացաւ Արևելքից և օգուտ քաղեց նրանից նրա համար, որպէս զի իր լուծը դնէ արևելեան ազգերի վրա։ Թիւրքիան չէ կարող անտարբեր հանդիսատես լինել Ռուսաստանի և Անգլիայի քաղաքականութեան Պարսկաստանում, որովհետև այժմ վճռվում է Պարսկաստանում մահվան և կեանքի հարցը Թիւրքիայի համար։ Չէ՞ որ նոյն պետութիւնները մի գեղեցիկ օր կարող են նոյնպիսի քաղաքականութիւն գործադրել Թիւրքիայի վերաբերմամբ, որպիսին նրանք այս բոպէիս գործադրում են Պարսկաստանում։

«Ուստի Թիւրքիան պէտք է այն պետութեան բարեկամութիւնը որոնէ, որը արգելք է հանդիսանում այդպիսի քաղաքականութեանը և միշտ պաշտպանել է մահմեդական ժողովուրդները։

«Երկրորդը խօսեց երիտասարդ Թիւրքերի կոմիտէտի անդամ Բաջի բէյ։ Նա յայտնեց, որ Անգլիան հրաժարվեց մարդասիրական քաղաքականութիւնից այն օրից, երբ նա յայտնի համաձայնութիւն կապեց Ռուսաստանի հետ իսլամի դէմ։ Մեծ-Բրիտանիան բոլորովին հրաժարվեց իր աւանդութիւնից՝ պաշտպան լինելու ճնշված ժողովուրդներին։

«Վերջին գլխաւոր հռետորն էր պարլամենտի անդամը Զմիւռնիայից, յայտնի գործիչ Ուբէյդուլլահ։ Նա իր կրակոտ ճառի մէջ ջախջախում էր Անգլիային և Ֆրանսիային.

«— Այդ երկիրները մի ժամանակ ազատութեան և ազատամտութեան իդէալ էին Թիւրքիայի համար, սակայն այժմ մենք չարաչար հիասթափվեցինք։ Ֆրանսիան, միլիարդներ տալով յետադէմ Ռուսաստանին, խոչընդոտներ է յարուցանում մեր սահմանադրական պետութեան փոխառութեան համար, թէպէտ Ըլդըզ-Քէօշկը նրանից տասն անգամ աւելի խոշոր գումարներ էր ստանում։ Անգլիան կամենում է իր թաթը դնել Պարսկաստանի վրա, սակայն ամբողջ աշխարհի մահմեդականները զօրեղ պաշտպան ունեն, որը միշտ նրանց պաշտպան է հանդիսանում, ուր էլ նրանց ճնշեն՝ Բօսֆորում, Մակեդոնիայում կամ Մարօկկօյում։ Այդ պաշտպանը գերմանական կայսրն է։ Այս պատմական բոպէին դէպի նրան են ուղղվում մեր բոլոր հայեացքները։ Թիւրքիայի համար մնացել է միայն մի քաղաքական կոմբինացիա Եւրոպայում, որը կարող է նրան պաշտպանել. դա երեքպետեան դաշնակցութիւնն է։ Ձեր հաւանութեամբ,—բացագանչեց հռետորը,—հաւանութեամբ ամբողջ մահմեդական աշխարհի, որի ներկայացուցիչներին տեսնում եմ այստեղ, առաջարկում եմ շնորհակալութեան հեռագիր ուղարկել գերմանական կայսրին և խնդրել նրան, իսլամի հաւատարմագոյն պաշտպանին, կարկառել իր ձեռքը նոյնպէս և մեր ճնշված եղբայրներին Պարսկաստանում։

«Ժողովը, որ բաղկացած էր բազմաթիւ օֆիցերներից, պատգամաւորներից, երիտասարդ-թիւրքերի կոմիտէտի անդամներից, հոգևորականութիւնից և ինտելիգենցիայից, այն բոլոր շրջաններից, որոնք քաղաքականութեան վրա ազդեցութիւն ունեն Թիւրքիայում, աղմկալի հաւանութեամբ պատասխանեց հռետորին։ Հռետորը յայտնեց, որ այդ ծափահարութիւնները պէտք է պատկանեն ոչ թէ իրան, այլ Վիլհելմ կայսրին։ Այդ խօսքերի ժամանակ ամբողջ ժողովը վեր կացաւ և երեք անգամ բացագանչեց «Եաշասըն Վիլհելմ Իքինջի» (կեցցէ Վիլհելմ II-ը)։

«Նոյն այն Վիլհելմ կայսրը, որը կամենում էր իր հովանաւորութեան տակ առնել Քրիստոսի գերեզմանը, հանդիսաւոր և ոչ առանց հիմքի յայտարարվում է իսլամի պաշտպան։ Քիչ էր մնացել միայն, որ այդ տիտղոսը մատուցվի նրա մերձաւորագոյն դաշնակցին—նորին առաքելական մեծութեան աւստրիական կայսրին»։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆՇԱՐԺ ԿԱՅՔԵՐԻ ՀԱՐԿԸ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՄ ՆՈՐ ՕՐԷՆՔՈՎ

I

Ֆինանսների մինիստրութիւնը հետզհետէ իրականացնում է րէֆօրմների այն ծրագիրը, որ յայտարարված էր դեռ մինիստր Ի. Շիպովի օրով (տես մեր յօդուածը՝ «Հարկերի մի նոր փունջ» «Մշակի» 1906 թ. № 83-ում)։

Չէ կարելի սակայն ասել, որ րէֆօրմները մտցվում են աստիճանաբար՝ գլխաւորից անցնելով երկրորդականներին։ Այսպէս՝ մինչև օրս քնած է մնում եկամտային տուրքի հարցը և յայտնի չէ, թէ արդեօք երրորդ Դուման մինչև իր վախճանը կը ձեռնամխէ՞ նրա քննութեան, մինչդեռ այդ տուրքի գլխաւոր հիմունքները վաղուց արդէն մշակված են և օրինագիծը գտնվում է արդէն Դումայի Յանձնաժողովի տրամադրութեան տակ, իսկ իրագործված ենք տեսնում երկրորդական րէֆօրմներից մի քանիսը, օրինակ պապիրօսի թղթի և գիլզաների ոչ-աչքող հարկը, որ արդէն իր դէմ ունի հակառակորդներ, կամ մօտ են իրականացման «զինուորական տուրքը», ժառանգական հարկի րէֆօրմը և այլն։

Իրականացած է այժմ և քաղաքներում եղած անշարժ կայքերի հարկի րէֆօրմը, որի ծրագիրը, ստանալով Պետական Դումայի և Խորհրդի հաւանութիւնը, Բարձրագոյնս հաստատվել է ներկայ տարվայ յունիսի 6-ին, դառնալով այդպիսով օրէնք, որի բնագրի հետ ծանօթանալ ցանկացողները թող դիմեն «Собраніе узаконеній и распоряженій Правительства», № 113, կամ «Вѣст. Финансовъ»-ի № 28-ի պաշտօնական բաժնին։

Քաղաքների անշարժ կայքերի հարկին վերաբերեալ յունիսի 6-ի օրէնքը հիմնովին փոփոխում է մինչև օրս գոյութիւն ունեցող հարկի ձևը. և քանի որ նա, նոր օրէնքը, բացի տեսական շահեկանութիւնից, ունի և գործնական նշանակութիւն, չէ՞ որ նա շօշափում է քաղաքներում եղած բազմաթիւ սեփականատէրերի շահերը,—ապա աւելորդ չենք համարում մօտիկից ծանօթացնել նրա հետ «Մշակի» ընթերցողներին։

Նախ մի քանի խօսք անշարժ կայքերից ներկայումս ստացվող հարկի մասին, որ դեռ գործադրվելու է մի տարի ևս, մինչև 1-ն յունվարի 1912 թ., տեղի տալով նոր օրէնքով սահմանած հարկին։

Անշարժ կայքերի հարկը—նրա պաշտօնական անունը՝ «պետական հարկ անշարժ կայքերից՝ քաղաքներում, պօսադներում (դղեակներում) և աւաններում»,—դրված էր բաշխական սկզբունքի վրա։

Պետութեան օրէնսդրական բարձրագոյն մարմինը—առաջ Պետական Խորհուրդը, այժմ Դուման և Խորհուրդը—Բարձրագոյն հաճութեամբ նշանակում էր ամեն մի նահանգի համար հարկի окладъ գումար, որ պիտի ամբողջովին գանձվէր նահանգում գտնվող քաղաքներից, խոշոր աւանների կամ դղեակների մէջ գոյութիւն ունեցող անշարժ կայքերից։ Հասկանալի է, որ օրէնսդրական մարմինը ամեն նահանգի համար հարկի քանակը որոշելիս ձեռքի տակ պէտք է ու-

---

Եւ կորցնելով վերջնականապէս իր կատարեալ անկախութիւնն ու տիրապետող դրութիւնը, նա ընկաւ սոսկալի ստորացման մէջ, հասաւ ծայրայեղ ստրկացման, եղաւ գերիների գերին և ի վերջոյ դարձաւ շնչաւոր մասը իր ամուսին-տղամարդու տնտեսական շնչաւոր և անշունչ ինվենտարի, մասնաւոր սեփականութեան անհրաժեշտ տարրը, նոյն իսկ գնման ու վաճառման ընդհանուր առարկան...

Եւ Մարքսը գտնում է, որ այդ նոր տերմինը (familia) հռոմէական իրաւաբանութեան մէջ՝ ծնունդ է ստրկութեան ինստիտուտի հաստատման, որը անհրաժեշտ պայմանն էր այն ժամանակվայ երկրագործ տարրի օրէնսդրութեան համար։ Հէնց «նորագոյն (այսինքն Հռոմի) ընտանիքում,—աւելացնում է Մարքսը,—գտնվում է ոչ միայն ստրկութեան (servitus) սաղմերը, այլ և ճորտութեան, որովհետև նրա ծառայութիւնը սերտօրէն կապված է երկրագործութեան հետ։ Ընտանիքի այս ձևի մէջ են զարգանում սաղմերը այն հակասութիւնների, որոնք յետոյ լայնօրէն զարգացան թէ հասարակութեան և թէ պետութեան մէջ»։ Եւ յիրաւի՝ պատմական էպոխաները միանգամայն արդարացնում են, ապացուցանում հանճարեղ մատերիալիստի խորիմաստ եզրակացութիւնը։

Ինչպէս տեսանք, մայրիշխանութեան յաջորդող պատրիարխատի ընտանիքում տիրապետող սկզբունքն էր միակնութիւնը, որը արդէն ստացել էր հանրութեան սանկցիան։ Ասում ենք տիրապետող, բայց ոչ բացարձակ, որովհետև սեռական յարաբերութիւնների հարցում պայմանականութիւնը անխուսափելի է սոցիալական ամեն տեսակ պայմաններում էլ։ Ինչ վերաբերում է բազմակնութեան կամ բազմայրութեան, դրանք սեռական կեանքի կազմակերպման այնպիսի անկայուն ձևերն են,—որ երբեք չէին և չեն կարող դառնալ ամուսնական ընդհանուր ձևեր՝ այն պարզ և հասկանալի պատճառով, որ երկու սեռի ներկայացուցիչներն էլ թւով գրեթէ հաւասար են։ Հարկաւ՝ թէ մէկը և թէ միւսը գոյութիւն ունէին որոշ պարագաներում, ինչպէս, օրինակ, բազմակնութեան գոյութիւնը սեմիտական նահապետական կեանքում։ Այս վերջին դէպքում բազմակնութիւնը անխուսափելի արդիւնք էր ստրկութեան, որի իգական սեռի ներկայացուցիչներից օգտվում էին գլխաւորապէս իրանց նահապետները, իսկ բացառիկ պարագայում՝ նրա որդ՚ներից մի քանիսը։ Եթէ այս երևոյթը մինչև այժմ էլ գոյութիւն ունի մահմեդականների մէջ, ի հարկէ արտօնեալների խիստ սահմանափակ շրջանում, այդ բացատրվում է նրանով, որ հարեմատիրոջ երկրորդ, երրորդ և աւելի կանայք այս ու այն անկիւններից գնված «ստրկուհիներ» են։ Ինչ վերաբերում է բազմայրութեան, դա ևս հազուագիւտ պարագաների արդիւնք է և չէ պահպանում իր դրութիւնը. օրինակ՝ Հնդկաստանի նայրներից երեք, չորս և աւելի թւով տղամարդիկ մի կին են պահում, սակայն նրանցից իւրաքանչիւրը իրաւունք ունի ուրիշ տղամարդկանց հետ ընկերովի պահել երկրորդ, երրորդ և աւելի թւով կանայք։

Ըստ Էնգելսի՝ միակին ընտանեկան նորագոյն ձևը իր բոլոր խստութեամբ կազմակերպվեց յոյների մէջ։ Աստուածուհիների կուլտը շատ հին ծագում ունի, երբ տակաւին կինը յարգի էր և ազատ. գիւղացիական շրջանում կինը զրկված էր արդէն ինքնուրոյնութիւնից և «օրինական» զաւակներ ծնելու համար դրված էր խստագոյն հսկողութեան ներքոյ։ Վերջին հանգամանքն էր միայն տղամարդուն ենթարկում այդ րէժիմին—ընտանեկան կապակցութեան—այլապէս նրա համար ևս այդ կեանքը որոշ չափով ծանր ու անտանելի էր, քանի որ նրան կապում էր որոշ պարտաւորութիւններով դէպի աստուածները, պետութիւնը և նախնիքները։ Դրանով էլ հէնց պէտք է բացատրել այն երևոյթը, որ տղամարդը, չը բաւականանալով իր միակին ընտանիքով, դիմում էր հետերների ծախու փաղաքշանքներին։

Միակնութիւնը (մօնօգամիան) սեռերի մէջ հաւասարութիւն չը մտցրեց, այլ, ընդհակառակը, նա ստորադրեց կնոջը տղամարդուն և դրանով ստեղծեց զօրեղ անտագօնիզմ սեռերի միջև։

«Անկասկած մօնօգամիան սօցիալական խոշոր նուաճումն է,—շարունակում է Էնգելսը,—սակայն նրա հաստատութեամբ՝ ստրկութեան և մասնաւոր սեփականութեան հետ միասին՝ սկսվում է մինչև այժմ էլ շարունակվող պատմական այն շրջանը, որի իւրաքանչիւր առաջադիմութիւնը ուղեկցվում է յետադիմութեամբ, մէկի բարգաւաճումն ու աջողութիւնները՝ միւսի դժբաղդութեամբ ու ճնշումով։ Մօնօգամիան քաղաքակրթված հասարակութեան այն բջիջն է, որով կարելի է ուսումնասիրել նրա մէջ պարփակված հակասութիւններն ու անհամակերպութիւնները»։

Սուրխաթեան

(Կը շարունակուի)

Նմնար այդ նահանգի անշարժ կայքերի վերաբերեալ տեղեկութիւններ. կայքերի թիւը, նրանց արժէքը կամ բերած եկամուտը, արդի տնտեսական վիճակը և այլն: Այդ տեղեկութիւնները ստացւում էին նահանգապետներից այն հաղորդագրութեանց հիման վրա, որ սրանց ներկայացնում էին քաղաքների ինքնավարական մարմինները կամ սրանց փոխարինող օրգանները:

Նահանգի վրա նշանակված գումարը տեղական բարձր ատեաններում՝ Ռուսաստանի ներքին նահանգների. Նահանգական զեմստւոյի ժողովում, իսկ Կովկասում նահանգական ատեանում ֆինանսական մինիստրութեան ներկայացուցչի մասնակցութեամբ՝ բաշխւում էին նահանգում եղած քաղաքների վրա, ի հարկէ, նայած սրանց մէջ գտնվող անշարժ կայքերի քանակի և նրանց արժէքի, քաղաքների ընդհանուր տնտեսական դրութեանց և այլն:

Ամեն մի քաղաքի վրա ընկած հարկը բաժանվում էր քաղաքի սահմաններում ըստ նրա օրինական հաստատված պլանի՝ գտնվող անշարժ կայքերի վրա, վերջիններիս արժողութեանց կամ եկամուտներին համաձայն: Հարկը բաշխող մարմիններն էին ներքին նահանգներում՝ քաղաքային ինքնավարութիւնները, իսկ մեզ մոտ Կովկասում յատուկ ատեաններ՝ հարկային տեսչի նախագահութեամբ և մասնակցութեամբ ներկայացուցիչների՝ սեփականատէրերից ընտրված: Բաշխման վերջանալուց յետոյ ատեանը դրա մասին յայտարարում էր ի գիտութիւն սեփականատէրերի, որոնք օրէնքով սահմանված միջոցին կարող էին գանգատներ բերել ատեանի վճռի դէմ՝ կամ այդ ատեանին կամ նշանակված աւելի բարձր մարմնին: Գանգատների ժամանակամիջոցը լրանալուց յետոյ, բաշխող ատեանը քննելով ստացված բողոքները, առարկութիւնները և բաւարարութիւն տալով սրանց կամ մերժելով՝ ըստ այնմ փոփոխում էր սկզբնական բաշխման ցուցակը և ապա ամեն մի սեփականատիրոջ ուղարկում նրան պատկանող անշարժ կայքերի հարկաթուղթը (ОКЛАДНЫ ЛИСТЪ)՝ գանձարանին հասանելիք հարկի քանակի մասին: Հարկը մուծվելու էր միանուագ՝ սեպտեմբեր ամսի ընթացքում: Այդ ժամանակամիջոցից ուշ մուծողները, իբրև տուգանք, վճարում էին հարկի գումարի վրա 12% աւելի:

Այս համառօտ տեսութիւնից դուրս է ընթերցողիս աչքին ընկած հարկի առանձնայատկութիւնները և նրա պակաս կողմերը՝ գանձարանի տեսակէտից: Բաշխման սկզբունքը հարկադրում էր օրէնսդրական մարմնին ակամայից դիմել քաղաքային ինքնավարութեանց տեղեկութիւններին, քանի որ ֆինանսական օրգանները չունէին բաւականաչափ նիւթեր անշարժ կայքերի գնահատման մասին: Իսկ յայտնի է, որ քաղաքների ներկայ ինքնավարութիւնները ամբողջովին գտնվում են սեփականատէրերի ձեռքերում և միշտ շահագրգռված էին կայքերի պակաս գնահատման մէջ, քանի որ այդ գնահատման համեմատ նրանք վճարում էին ոչ միայն արքունի, այլ և քաղաքային և զեմստվոյի տուրքերը: Եւ իրաւ. ֆինանսների մինիստրութիւնը հարկային տեսուչներ նշանակելուց յետոյ սկսեց ուսումնասիրել քաղաքային ինքնավարութիւնների կայքերի գնահատման գործը, և ամեն տեղ երևան եկաւ միևնոյն հանգամանքը, որ à priori կարելի էր նախատեսել. քաղաքային ինքնավարութեանց գնահատումը շատ պակասեցված էր իրականութեան դէմ: Մենք անձնական փորձից գիտենք, որ Պետերբուրգի ինքնավարութեան գնահատումը 1890-ական թւերի սկզբում առնուազն 2½ անգամ պակաս էր ամենաչնչին և չափաւոր գնահատութիւնից, որ կատարված էր հարկային տեսուչների ձեռքով:

Աւելացնենք, որ Անդրկովկասի շրջանում հարկը այս ձևով մտցված էր 1898 թւից սկսած: Վերջին տարվայ (1910 թ.) նշանակված գումարներն էին Թիֆլիսի նահանգի համար՝ 253,000 ր., Բագուի՝ 325,000 ր., Երևանի և Գանձակի նահանգների համար 38,000-ական րուբլի, Կարսի շրջանի՝ 11,500 ր., իսկ ամբողջ Կովկասից (բացի Ստաւրոպոլի նահանգը)՝ 996,000 ր.:

Հարկին, ինչպէս ասացինք, ենթարկվում էին քաղաքի պլանում գտնվող կայքերը: Մինչդեռ 60-ական թւականների խոշոր ռեֆորմներից յետոյ, առաւել վերջին 20—25 տարիների ընթացքում, երբ նշանաւոր չափով զարգացաւ արդիւնաբերութիւնը, բազմացաւ երկաթուղային ցանցը, քաղաքները դուրս եկան իրանց հաստատված պլանի սահմաններից, վոկզալների մոտ ստեղծվեցին նոր քաղաքներ, արուարձաններ, նոյնը նաւահանգիստների շուրջը, նախկին գիւղերը միացան քաղաքների հետ և այլն: Եւ այս շրջաններում գտնված անշարժ կայքերը ազատ էին հարկից, որպէս պլանից դուրս գտնվողներ: Ճիշդ է, եղել են փորձեր այդ կայքերը ենթարկել հարկի, բայց միշտ անաջող. կառավարիչ սենատը միշտ ընդդիմացել է, երբ նման գործեր հասել են նրա քննութեան:

Վերջապէս պակաս նշանակութիւն չունէր և այն հանգամանքը, որ հարկի տնօրինութիւնը կախված էր, գրեթէ բացառապէս, ներքին գործերի մինիստրութիւնից, իսկ ֆինանսական մարմին թողված էր միայն հսկողութիւնը. իսկ ներքին գործերի մինիստրութիւնը այնքան էլ շահագրգռված չէր հարկի աճման գործում:

Այժմ անցնենք նոր օրէնքին:

Պետրոս Զաքարեան

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Ղըլ-Աղվադ, 16 նոյեմբերի

Գիշերս անյայտ չարագործները, կտրելով Գ. Բարսեղեանցի և Գ. Մովսիսեանցի մանուֆակտուրային խանութի հիւսիսային դրան ստորին մասը, դուրս են կրում այնտեղից մեծ քանակութեամբ ժանգագին ապրանք, գլխաւորապէս բրդէ և մահուդէ կտորներից: Ասում են, որ վնասը հասնում է մինչև 1500 ր. աւելի: Ձեռք են առնված համապատասխան միջոցներ չարագործներին գտնելու: Կասկածում են, որ գողութիւնը կատարված կը լինի վերջերս Բագուից այստեղ թափված պարապ-սարապ բանւորների կողմից: Դէպքը արդարացի զայրոյթ է առաջացրել հասարակութեան մէջ:

Վերջին օրերս տաք և հաճելի եղանակներին հետևեցին ցրտերը. շարունակ քամի է փչում: Մարդիկ սկսում են ձմեռվայ վերարկուներ կրել: Ամսիս 18-ից կը սկսվեն, «սկարլատինի» պատճառով ընդհատված, դասերը ծխ. դպրոցում:

Մենտոր-Միրամ

ԳԻՒՂԱԿԱՆ ԲԱՐՔԵՐԻՑ

Բնական զանազան պատահարներից ըստացված վնասները, որոնց հարուածներից շարունակ տուժում է գիւղական տնտեսութիւնը, գիւղացու համար կարծես այնքան սարսափելի չեն, որքան իր նման մարդու ձեռքով հասցված վնասները, իսկ այդ տեսակին պատկանող վնասներից ամենաւերիչը և սարսափելին գիւղացու համար՝ է գողութիւնը, որը գլխաւորապէս պտտում է տնային անասունների շուրջը և իր անցած տեղերում թողնում է աւերիչ հետքեր...

Գողութիւններից տուժելու և տուժել տալու տխուր գործում մեր գիւղը ևս ունեցել է իր անցեալ պախարակելի պատմութիւնը:

Վերջին ժամանակներս, սակայն, նա, թէև խիստ դանդ և թանգ գնով, թօթափեց իրանից այդ արատը և մտաւ իր տնտեսութիւնը և բարոյականութիւնը բարելաւելու մասին մտածող հասարակութիւնների շարքը և, պէտք է նկատել, այդպէս է և ներկայումս:

Սակայն, ինչպէս և ուրիշ շատ հասարակութիւններ, մեր շրջանը ևս ունի իր տականքը, որի պաշտօնն է թունաւորել հասարակական կեանքի խաղաղ ընթացքը, արատաւորել, ցեխը կոխել նրա բարի անունը... Եւ ահա այդ տականքը նորից շարժվել է սկսում. տեղ-տեղ երևում են արդէն նրա «պտղերը» և, ի մեծ դժբաղդութիւն մեր հասարակութեան, տեղի են ունեցել գողութեան դէպքեր, շինական խաղաղ կեանքը թունաւորելու նշաններ, որը թէև դանդաղօրէն, բայց աստիճանաբար լայնացնել է աշխատում իր շրջանակը... Գիւղը առայժմ իրան յայտ տալով չէ ուզում հաւատալ, թէ տեղի ունեցած դէպքերի հեղինակները իր միջից կը լինեն, վերագրում է դրսից եկած գողերի և հետքերն էլ ուրիշ տեղերում գտնում, բայց միևնոյն ժամանակ և դժուարանում է հաւատալ, որ այդ դէպքերը կատարվելիս լինեն առանց «միջի մարդու» օգնութեան...

Բայց, այսպէս թէ այնպէս, ցաւալի իրողութիւնն այն է, որ թոյնը արդէն մտել է և պէտք է աշխատէ աւելի խորը թափանցել, եթէ արգելքի չը հանդիպի:

Անցեալի դառն փորձերից դաղված հասարակութիւնը ինքը պէտք է, յանուն իր վարկը ցեխոտվելուց ազատելու, յանուն իր սկսած, թէև համեստ, բայց պարծանքի արժանի գործի, ամեն ջանք գործ դնէ գտնելու այդ սրիկայութիւնների մայր որջը և տեղն ու տեղը սեղմելով զրկէ նրան՝ իր կործանիչ գործունէութիւնը երկարացնելու հնարաւորութիւնից... Այդ պահանջում է հասարակութեան սեփական շահը, լինի նա բարոյական, թէ նիւթական, և ամեն մէկը, ով բարեկամ է համարում իրան այդ հասարակութեան, պէտք է ամեն կերպ աջակցէ նրան այդ դժուարին գործում: Բոլոր գործ դրված միջոցները, որքան էլ նրանք սաստիկ լինեն, ապարդիւն կանցնեն, եթէ ինքը հասարակութիւնը չի ցոյց տայ ջերմ աջակցութիւն և չի ունենայ ակտիւ մասնակցութիւն:

«Մի մուկը 100-անոց կարաս ա մուտառում», — ասում է հէնց մեր առածը. ապա ուրեմն այդ մկներին, ուր էլ լինեն նրանք, պէտք է խստօրէն պատժել, որ նրանք իրանց մուտառութեան թոյնով չը «հարամեն» հասարակութեան բարոյականութեան կարասները...

Բ. Մկրտումեան

Շնող գիւղ

ՎԱԼԵՐԻԱՆ ՋԵՍԼԻԵԱՆ (ՎԱԼԵՐԻԱՆՈՎ)

Թիֆլիս է եկել յայտնի օպերետային դերասան Նոր-Նախիջևանցի Վալերիան Ջեսլիեան (բեմական ազգանունը՝ Վալերիանով):

Երիտասարդ արտիստը եկել է Թիֆլիս և ձմեռս մնալու է Թիֆլիսում, ծնողների մօտ, կազդուրվելու նպատակով:

Ազատ ժամանակից օգտվելով Ջեսլիեանը մտադիր է երբեմն մասնակցել Ժողովրդական Տան հայկական ներկայացումներին:

Յարգելի արտիստը միայն 5—6 տարի է, ինչ ռուս բեմի վրա է, նախնական բեմական փորձերը կատարելով Նոր-Նախիջևանում սիրողների հայերէն ներկայացումներին:

Եւ քաղցր է ինձ նորից գրել այդ տաղանդաւոր երիտասարդի մասին, քանի որ առաջին ռեցենզիան ես 8 տարի առաջ տուել էի Ռոստովում «Донская Рѣчь» թերթում, մատնանշելով երիտասարդ սկսնակի մէջ տաղանդ և բեմական առանձին ընդունակութիւններ:

Վալերիան Ջեսլիեանը ունի հիանալի տեմբրով աջող ձայն, որը նկատվել է մասնաւոր կոնցերտներում ռուս թերթերի կողմից:

Ջեսլիեանը, այդ տաղանդաւոր երիտասարդը, և ինքնուս բաւական աջող քանդակագործ է և փորագրիչ, պարող, միևնոյն ժամանակ արտասովոր ֆիզիկական ուժի տէր և եղել է անդամ Ատլէտական Ընկերութեան:

18—20 պուդ վերցնելը և մի ձեռքով 8—9 պուդ վերցնելը սովորական բան էր դեռ 6—8 տարի առաջ նրա համար:

Ջեսլիեանը աւարտել է Խարկովի վաճառականական դպրոցը և Պետերբուրգի դրամատիկական կուրսերից մէկը, պարապելով դրամատիկական և օպերային արուեստով:

Այստեղ աւելորդ չենք համարում քաղել մի քանի կարծիքներ նրա խաղի մասին ռուս թերթերից:

«Շատ լաւ էր Վալերիանով Պոլի դերում «Майская ночь» օպերետայի մէջ: Լոկէյի դերը ուժեղ պատկերացումն էր կենդանի իրականութեան: Լոկէյական պարերը, շարժումները և ման գալու ձևը ամենամանրամասն գիտողութիւններով մշակված և ճիշդ էր»:

Պետերբուրգի թերթերից մէկը գրում է. «Կոնցերտային բաժնում ամենալաւ տպաւորութիւնը գործեց բարիտոն Ջեսլիեանը իր բովանդակիչ ձայնով, գեղեցիկ մեղրուտով և փայլուն տենորական բնաւորութեամբ (à la Battistini) վերին նոտաներում, ազատ բարձրացող մինչև բարձր la. Նա հիանալի երգեց «Будь я царемъ» Վրանգելի և մի քանի ռոմանսներ bis-ի առիթով»:

«Վալերիանովը արքայի դերը «Король» պիէսայում սկզբից մինչև վերջը տարաւ խիստ աջող, տալով բոլորովին վերջացած Յովսէփ II-ի տիպը», — ասում է «Виленскій Вѣстникъ» թերթը:

«Բազմաթիւ մասնակցողներից մանաւանդ աչքի էր ընկնում իր խաղով բարիտոն Վալերիանովը», — ասում է Վարշավայի ռուս թերթը:

Մի այսպիսի ինտելիգենտ ուժ և տաղանդաւոր արտիստ ուղղակի գիւտ կը լինի Ժողովրդական Տան հայկական սեկցիայի համար, և վստահ ենք, որ ներկայացումների ղեկավարները հանգամանքից օգտվելով հնարաւորութիւն կը տան տեսնելու բեմի վրա երիտասարդ դերասանին:

Յակոբ Գենջեան

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՆՈՐ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ

Հոկտեմբերի 14-ին կայացաւ Դումայի յանձնաժողովի խորհրդակցութիւնը համալսարանական հարցի վերաբերմամբ, պրոֆեսորների հետ միասին քննելու Ա. Ն. Շվարցի մշակած համալսարանական կանոնադրութեան նախագիծը: Դումայի յանձնաժողովի անդամներից ներկայ էին՝ ֆոն-Անրէպ, Գոդնէվ, Նեկրասով, Սոկոլով, Միլիւկով, Ստեպանով և Նիկոլսկի: Պրոֆեսորներից՝ Պետերբուրգի համալսարանի ռեկտոր Դ. Դ. Գրիմ, Է. Դ. Գրիմ, Գրէվս, կանանց բժշկական կուրսերի դիրեկտոր Սալազկին, պրոֆ. Պերգամենտ, տեխնոլոգիական ինստիտուտի դիրեկտոր Զէրնով, պրոֆ. Բրաուն, անտառային ինստիտուտի դիրեկտոր Կոսովսկի և պրոֆ. Վեդենսկի:

Պրոֆ. ֆոն-Անրէպ առաջարկեց համալսարանական կանոնադրութեան հարցը երկու մասի բաժանել: Առաջին մասում քննել շտատները, բացի պրոֆեսորների ռոճիկի կէտից, իսկ երկրորդ մասում քննութեան ենթարկել կանոնադրութիւնը ըստ էութեան: Միևնոյն ժամանակ ֆոն-Անրէպ առաջարկեց քննել երկու մասերը անջատ և չը միացնել նրանց վիճակները:

Պրոֆեսորների մեծամասնութիւնը և Պետական Դումայի անդամները համաձայնվեցին ֆոն-Անրէպի տեսակէտի հետ:

Ապա ներկայ եղողները կարծիքների փոխանակութիւն ունեցան համալսարանական կանոնադրութեան էութեան վերաբերմամբ:

Խորհրդակցութեան անդամների մեծամասնութիւնը անընդունելի է համարում հոգաբարձուի միջամտութիւնը համալսարանական գործերում, խօսում է համալսարանական խորհուրդների իրաւասութիւնը կրճատելու դէմ, ընտրողական սկզբունքի ճնշման դէմ թէ պրոֆեսորների և թէ պաշտօնական անձանց վերաբերմամբ և անհրաժեշտ է համարում մշակել մանրամասն հրահանգ ուսանողական ժողովների և կազմակերպութիւնների համար:

Համալսարանական պրիստաւների վերաբերմամբ խորհրդակցութիւնը այն կարծիքը յայտնեց, որ ինքն՝ պրիստաւների ինստիտուտը, որպէս պաշտօնակատար անձանց, որոնց պարտաւորութիւնն է հետևել կարգապահութեանը համալսարանի պատերի մէջ, անհրաժեշտ է, սակայն համալսարանական պրիստաւները չը պէտք է ոչ մի համազգեստ կրեն, չը պէտք է ոստիկանական պարտաւորութիւններ կատարեն, այլ կատարում են միայն արտաքին կարգապահութեան վրա հսկելու պարտաւորութիւնները, միևնոյն ժամանակ ամբողջապէս ռեկտորի և պրորեկտորի իշխանութեան տակ են գտնվում: («Р. С.»)

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԵԱՆ ՄԻՆԻՍՏՐՈՒԹԻՒՆԸ

Գնալով պնդում են, որ ժողովրդական առողջապահութեան յատուկ մինիստրութիւն հիմնելու հարցը վճռված է դրական կերպով:

Խօլերայի և ժանտախտի վերջին էպիդեմիաները հարուցում, նրանց դէմ կռիւ մղելու արմատական միջոցների, նոյնպէս և գործունէութեան միակերպութեան բացակայութիւնը առաջացրին այն հարցը, թէ անհրաժեշտ է շուտափոյթ մի այնպիսի օրգան ստեղծել, որը հսկէր ազգաբնակութեան առողջապահութեան վրա:

Նոր մինիստրութեան դերն է լինելու, ընդհանուր գծերով, կանոնաւոր սանիտարական կազմակերպութիւնը, բնակարանային և առողջապահական պայմանների բարւոքումը: Մտադրութիւն կայ ամենուրեք հիմնել ռայոնական առողջա-հոգաբարձական յանձնաժողովներ, որոնց կազմի մէջ կը մտնեն քաղաքային և զեմստվոների ինքնավարութիւնների ներկայացուցիչները, նոյնպէս և արդիւնաբերութեան ու առևտրի ներկայացուցիչները:

Մերժվել է բանւորական կազմակերպութիւնների ներկայացուցիչների մասնակցութիւնը այդ յանձնաժողովներում և ազգաբնակութեան ներկայացուցիչները քաղաքներից և զեմստվոներից:

Հիմնվող առողջապահական մինիստրութեան առաջին մինիստր կը նշանակվի, որպէս ասում են, բժշկական խորհրդի այժմեան նախագահ պրոֆեսոր Գ. Ե. Ռէյն. նրա օգնական անւանում են պրոֆեսոր Ն. Ֆ. Գամալէյին: («Р. С.»)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Երէկ, հանգուցեալ Ալեքսանդր III կայսրի մահվան օրը, Վրաստանի էկզարխը զինւորական տաճարում պատարագից յետոյ կատարեց հոգեհանգիստ, որին ներկայ էին Կովկասի Փոխարքան, նրա երկու օգնականները, շտաբի անդամները, զինւորական և քաղաքացիական հաստատութիւնների ու մարմինների ներկայացուցիչներ:

◆ Այսօր, հոկտ. 21-ին, Նորին Կայսերական Մեծութիւն Թագաւոր Կայսր Նիկոլայ Ալեքսանդրովիչի գահակալութեան օրը, պատարագ և մաղթանք կը լինի Ալէքսանդրո-Նեվսկիի անուան զինւորական տաճարում: Սկիզբն է ժամը 12-ին:

◆ «Т. Л.»-ի ասելով, Նորին Պայծառափայլութիւն կոմսուհի Ելիզավէտա Անդրէևնան 1,500 րուբլի նուիրեց Թոքախտի դէմ մաքառող Կովկասեան Ընկերութեանը, որպէսզի այդ փողով մի մահճակալ պահվի Աբասթումանի ապագայ սանատորիայում կոմսուհու անունով:

◆ Թռչնապահութեան ցուցահանդէսը կը փակվի վաղը: Ամեն օր լինում են մեծ թւով այցելուներ:

◆ Մեզ հաղորդում են, որ Յովնանեան դպրոցի հոգաբարձութիւնը ներկայ 1910/11 ուսում. տարվայ իր նախահաշիւը կազմել է այնպէս, որ դեֆիցիտ չունենայ: Մուտք սպասվում է 31,634 ր., իսկ ծախք՝ 31,261 ր.: Դպրոցի 1908/9 և 1909/10 թ.թ. տեղեկագրերը շուտով կը տպվեն:

◆ Մեզ հաղորդում են, որ շուտով յատուկ հրահանգիչներ պէտք է ուղարկվեն դէպի մի քանի գիւղեր՝ կատարելու մի շարք փորձեր տնային անասունների կերակրելու եղանակը բարւոքելու համար: Հրահանգիչները պէտք է կերակրեն անասուններին զանազան կերակրանիւթերով և գիտեն, թէ որքան աւելանում է նրանց տուած կաթը և միսը: Առաջին փորձերը որոշված է անել Վորոնցովկա գիւղում, իսկ յետոյ նրանց կրկնել միւս տեղերում:

◆ Մեզ հասած տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ հետևեալ տարում պէտք է բացվեն մի քանի նոր ցուցադաշտեր մեր երկրում՝ կատարելու զանազան գործնական ցոյցեր գիւղատնտեսութիւնից: Թէ տափարակային և թէ լեռնային շրջաններում զգացվում է գիւղատնտեսական բարւոքումների մեծ պահանջ: Գիւղական ժողովուրդը թէև դեռ թոյլ կերպով, բայց արդէն սկսել է գիտակցել կատարելագործութիւնների նշանակութիւնը և արժէքը:

◆ Ժողովրդական համալսարանի ընկերութեանը համաձայնութիւն են յայտնել դասախօսութիւններ կարդալ մօտ 50 հոգի, որոնց թւումն են մի քանի պրոֆէսորներ: Այսօր նշանակված է ընկերութեան նիստը, ուր կորոշվի թէ ով ինչ նիւթի մասին է ուզում դասախօսել:

◆ Թիֆլիսի նահանգապետը ուշադրութիւն է դարձնել տալիս այն հանգամանքի վրա, որ սանիտարական կանոնների խախտումների մասին եթէ հարկ է լինում արձանագրութիւններ կազմել, սանիտարական գործադիր մարմնի անդամները, ինչպէս նաև սանիտարական հոգաբարձուները խուսափում են այդ անելուց, այլ կատարել են տալիս ոստիկանական պաշտօնեաների ձեռքով:

◆ «Ախալի Ազրի» լրագրի խմբագրատունը ձերբակալված 11 հոգուն ոստիկանութիւնը ուղարկեց Մետեխի բանտը:

◆ Անդրկովկասեան երկաթուղիների վրա նոր կանոններ են մտցված գծի շուրջն ընկած հողաբաժիններից օգտվելու մասին: Այդ հողաբաժինները կարող են տրվել երկաթուղային ծառայողներին կացարանների համար, ամեն տարի կապալ վերցնելով մի քառ. սաժենից 2 կոպէկ 12 տարի շարունակ: Կացարանները անմիջապէս պէտք է քանդվեն, եթէ այդ կը պահանջէ երկաթուղային վարչութիւնը իր անհրաժեշտ պէտքերի համար: Հողից օգտվելու իրաւունքը արգելվում է ուրիշին տալ:

◆ Քաղաքային ինժեներ Զուրաբեանը վարչութեանը ներկայացրեց իր կազմած նախագիծը Ալէքսանդրեան հիւանդանոցի համար նոր շէնք կառուցանելու մասին: Յիշեալ նախագծով հիւանդանոցը ունենալու է 100 մահճակալ և նստելու է 148,000 րուբլի:

◆ Կովկասի Հ. Բ. Ընկերութեան խորհուրդը ստացել է նուէր Ընկերութեան գրադարանի համար՝ Բաբգէն վարդապետից 11 կտոր գիրք, կոյս Հռիփսիմէ Թայիրեանից «Գարուն» գրական-գեղարուեստական և գիտական-քննադատական պրակներից 4 գիրք, Գ. Մելիք-Կարագեօզեանից «Արամը» (գծեր հայ-քիւրդական կեանքից) 85 օրինակ: Խորհուրդը նուիրատուներին յայտնում է իր խորին շնորհակալութիւնը:

◆ Խօլերայի նշաններով հիւանդացած Օլգա Ցելովալնիկովան մեռաւ: Ներկայումս խօլերային բարաքներում ոչ մի հիւանդ չը կայ:

◆ Ինժեներ Արքելեանը մի ընդարձակ զեկուցում է կազմել Ծալկայից ջուր բերելու միջոցների մասին:

◆ Այս օրերս տօնվեց Թիֆլիսի նահանգի ժողովրդական դպրոցների վերատեսուչ Ֆեօդորովսկիի մանկավարժական գործունէութեան 25-ամեակը:

◆ Օզուրգէթում ձերբակալված պօստային պաշտօնեայ Ասաթիանին, որ մեղադրվում է կեղծ ընկալաթղթով 100,000 ր. յանձնելու մէջ, բերվեց Թիֆլիս և բանտարկվեց Մետեխի բանտում:

◆ Կախեթիայի մի քանի տեղերում երևացել է նաւթի հետք: Ասում են, թէ իբր արդէն մի անգլիական ակցիոներական ընկերութիւն է կազմվել նաւթը շահագործելու նպատակով՝ 200,000 ֆունտ ստերլինգ դրամագլխով:

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Թիֆլիսի նահանգապետի որոշմամբ ենթարկվում են տուգանքի՝ Կէտօ Ջիբաշվիլին զէնք պահելու ու կրելու համար 5 ր., աւտոմոբիլի շօֆէր Շիօ Արէնաշվիլին 10 ր., Մակսիմ Գարկուշան և Միխայիլ Դուաշվիլին ոստիկանական պաշտօնային վիրաւորելու համար 25-ական րուբլով:

◆ Ոստիկանական պաշտօնեաները սեպտ. 18-ին (այս տարվայ) ձերբակալեցին և ուղարկեցին խուզարկու բաժանմունքը պարսկահպատակ Պետրոս Պօղոսի որդուն, 48 տարեկան, առանց որոշ զբաղմունքի: Քննութիւնը պարզեց, որ այդ Պետրոսը 1908 թ. մարտին Թիֆլիսում խաբեբայութեամբ գողացաւ 1,200 ր. ալէքսանդրօպոլցի Եգոր Ասատուրեանից և նոյն 1908 թ. Թիֆլիսում նոյնպէս կեղծ դրամների միջոցով՝ յափշտակեց 1,500 ր. Անաստասիա Այվազեանից: Երկու դէպքում էլ ձերբակալվածը խոստովանեց իր յանցանքը:

◆ Հոկտ. 19-ին Նիկոլաեվսկայա փող. № 100 տան դռների մօտ գտան մի աղջիկ նորածին երեխայի, որին տարան Օլգինսկի ապաստարանը:

◆ Հոկտ. 19-ին Ջալալ-օղլեցի Նիկոլայ Նիկողոսեանից անյայտ անձեր գողացել են 9 ոչխար, 2 կով և մի եզ՝ 220 րուբլի արժողութեան:

◆ Հոկտ. 19-ին Թիֆլիսեցի Ելիզավէտա Բէտիէվի բնակարանից Վլադիմիրսկայա փող. անյայտ անձեր գողացել են 217 րուբլու զանազան իրեր: Կասկածը Բէտիէվը յայտնեց այն կլայեկողի վրա, որ մի օր առաջ վերցրել էր կաթսաներ կլայեկելու համար: Մատնանշված անձը՝ Մագոմայ Ամիր-օղլին՝ ձերբակալված է:

◆ Հոկտ. 19-ին, երեկ. ժամը 9-ին, քաղաքապահներ Առաքելեանը և Հաջիեվը անցնում էին Կախէտինսկայա փողոցով, ուր մի մութ տեղում ենթարկվեցին անյայտ մարդկանց յարձակման, որոնք խլելով Առաքելեանի ատրճանակը, սպանեցին նրան տեղնուտեղը և յետոյ դիմեցին փախուստի: Վերջում աջողվեց ձերբակալել նրանցից մէկին՝ Գէօրգի Բօրօշվիլիին, 26 տարեկան, առանց որոշ զբաղմունքի: Միւս ընկերներին ձերբակալելու համար միջոցներ են ձեռք առնված:

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԵԱՆՔԻՑ

◆ Պետերբուրգի նահանգական դատարանում քննվում էր հոկտեմբերի 14-ին պսիխո-նեվրոլոգիական ինստիտուտի ուսանող Կրասովսկու գործը: Կրասովսկին մեղադրվում էր այն բանում, որ, սարքելով ի նպաստ իրան կոնցերտ, մասնակցութեամբ արտիստների, նա քաղաքապետին տրված խնդիրքի մէջ կոնցերտը թոյլատրելու մասին ստորագրել էր կայսերական թատրոնների արտիստ Ամիրջանի ազգանունը: Նահանգական դատարանը դատապարտեց Կրասովսկուն 7 օրվայ բանտարկութեան ոստիկանատան մէջ: («Р. С.»)

◆ Մինսկի նահանգի Մօզիրսկի գաւառի լենացի կալուածատէր 65-ամեայ ծերունի Նօսօբէյապօֆը, որպէս յայտնի է, տաժանակէր աշխատանքների էր դատապարտված աղուէսներ որսալու համար ուղղափառ տաճարի մէջ: Ներկայումս երեք գիւղերի գիւղական համայնքները, որոնք հարեան են Նոօրէլսդորֆի կալուածքին և որոնց ազգաբնակութիւնը գլխաւորապէս ուղղափառ դաւանութեան ունեն, Բարձրագոյն անունով խնդիրք տուին, որ ներումն շնորհվի դատապարտվածին, որը երկար տարիների ընթացքում հարեան լինելով իրանց՝ օգնութիւն էր հասցնում և ամեն տեսակ արտօնութիւններ էր տալիս նրանց:

(«Р. С.»)

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Հոկտեմբերի 19-ին, Վրաց Թատրոնում տեղի ունեցաւ հերթական գրական-երաժշտական երեկոյթներից մէկը: Լադոնուազ երաժշտախմբի նուագածութեամբ, առաջինը խաղացվեց վրացերէն լեզուով «Հրաւէրք իտալացիների հետ» օպերէտը, որին մասնակցում էին տ. Տասօ և պ. Վ. Աբաշիձէները: Օպերէտը աջող անցաւ և հանդիսականներին պատճառեց առողջ ծիծաղ և մեծ բաւականութիւն:

Ցետոյ տեղի ունեցաւ գրական բաժինը, մասնակցութեամբ դերասանների, որը շատ թոյլ անցաւ:

Երրորդ բաժինը բաղկացած էր կենդանի պատկերներից՝ Բէթհովէնի կեանքից, որի ղեկավարութիւնը յանձնված էր քանդակագործ Նիկոլաձէին:

Կենդանի պատկերները սքանչելի տպաւորութիւն թողին:

Վերջում խաղացվեց «Գաղտնի խորհրդականի երազը» բուֆօնադան, որին մասնակցում էր կատակերգու դերասան Կ. Մէսխին, որը և շատ տիպիկ կերպով կատարեց խորհրդականի դերը:

Դատելով ժողովրդի սաստիկ քանակութեամբ ներկայ գտնվելուց,—որը ապացոյց կարող է ծառայել, որ հասարակութեանը առհասարակ հետաքրքրում են նման երեկոյթները,—ցանկալի ենք գտնում, որ մեր մէջ ևս սովորութիւն դառնան այսպիսի երեկոյթների կազմակերպումները, որի նախաձեռնութիւնը իր վրա կարող է վերցնել Հայ Դրամատիկական Ընկերութեան վարչութիւնը: A—s.

ԹԱՏՐՈՆԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

◆ Կովկասեան գլխաւոր իշխանութիւնը թոյլ է տուել խաղալ Կովկասի բեմերի վրա՝ ա) ռուսերէն «Օֆիցեր և դենշչիկ» պիէսը 3 գ., հ. Գարէնի. բ) վրացերէն «Եւգինէ» դրաման 4 գ., Շիրվանզադէի, Թարգմ. Կ. Կարապետեանի, «Անմեղ օրիորդներ» պիէսը 4 գ., Բատայլի, Թ. Նարիմանի, և գ) հայերէն «Բժիշկ Աջիբրաջեան» պիէսը, Բամբուլիէի, Թ. Լ. Կարապետեանի:

◆ Հայ դրամատիկական խմբի հետեւեալ ներկայացմանը կը խաղացվի «Գող» դրաման:

◆ Նոյեմբերի սկիզբներին լոյս կը տեսնի Պշիբըշևսկիի «Ձիւնը» Զալալ Տէր-Գրիգորեանի թարգմանութեամբ և «Աղբիւր-Տարազի» հրատարակութեամբ: Իշխան Սումբաթովի «Դաւաճանութիւն» պիէսը, որ դրվում է շարունակ հայ բեմի վրա, կատարված է նոյնպէս նոյն թարգմանչի ձեռքով: Զալալ Տէր-Գրիգորեան «Ձիւնը» թարգմանել է դեռ երեք տարի սրանից առաջ և անշուշտ նա նոյնպիսի խնամքով է կատարված, ինչպէս և «Դաւաճանութիւնը», որ դարձեալ «Աղբիւր-Տարազի» հրատարակութիւնն է:

ՄԱՄՈՒԼ

«Մշակը» իր առաջնորդող յօդուածով պարսաւեց Թիֆլիսի Հայոց Հրատ. Ընկերութեան որոշումը՝ հրատարակել Հոմերոսի և Շոթա Ռուսթավէլիի երկերի թարգմանութիւնը, գտնելով որ ներկայումս հայ ժողովրդի համար կենսական նշանակութիւն ունեցող գրքեր են հարկաւոր, կլասիկական հեղինակների երկերը շռայլութիւն են, մանաւանդ որ նրանք արդէն մի քանի անգամ թարգմանված են:

«Մշակի» յարուցած այդ հարցի առիթով «Баку» թերթը գրում է.

Հրատ. Ընկերութեան վարչութեան այդ որոշումը—մի ընկերութեան, որ չէ հանդիսանում վաճառաշահ հրատարակչական ֆիրմա, որ պարտաւոր չէ իր հրատարակութիւնների և ճաշակների մասին հաշիւ տալ, այլ մի լուսաւորական հաստատութիւն, որի մէջ շատերը մտցնում են իրանց լուման առանց որևէ առևտրական նկատումների—հայ մամուլը համարում է վերին աստիճանի սխալ և նոյնիսկ արժանի դատապարտութեան:

«Մշակը» նոյնպէս դատապարտելով ընկերութեան որոշումը՝ ցոյց է տալիս, որ «Իլիականը» և «Ոդիսականը» մի քանի անգամ թարգմանվել են և հրատարակվել հայերէն: Բայց ընկերութեան որոշումը դատապարտելու ստիպող գլխաւոր նկատումն այն չէ, որ «Իլիականը» և «Ոդիսականը» արդէն կան հայերէն, այլ ուրիշ հանգամանքներ:

Ներկայ պայմաններում, որոնց մէջ ապրում է հայ ժողովուրդը, մանաւանդ նրա կովկասեան մասը, նոյնիսկ հին կլասիկական գրականութեան գլուխ-գործոցների թարգմանութիւնները գրական շռայլութիւն պէտք է համարվեն: Այդ շռայլութիւնը կարող են իրանց թոյլ տալ կուլտուրայով և լուսաւորութեամբ հզօր այն ազգերը, որոնք ամեն անհրաժեշտ բան ունեն ժամանակակից կեանքի կուլտուրական կազմի համար և հին դիցաբանութեան գեղեցկութեամբ լրացնում են իրանց ժամանակակից կուլտուրան: Բայց այնպիսի ժողովրդի համար, ինչպէս հայոց ազգն է, որ դեռ պէտք ունի շատ և շատ ժամանակակից կարիքների ներկայումս—ինչպէս արդարացի կերպով նկատում է «Մշակը»—ուրիշ տեսակ գրքեր են պէտք: Եւ մեզ դեռ շատ բան է պէտք, մինչև հերթը կը հասնի հին հարուստ կլասիկական գրականութեան: Ոչ ոք չէ կարող մարգարէութիւն համարել եթէ ասենք, որ հայ ինտելիգենցիան իր ձեռքը չի առնի կարդալու այդ թարգմանութիւնները: Ինտելիգենցիայի մի մասը դեռ երիտասարդ հասակում կարդացել է նրանց աշակերտական նստարանի վրա, ռուսերէն և հայերէն. մի այլ մասը ամենևին ձեռքը չի առնի այդ գրքերը: Եւ Հրատարակչական Ընկերութեան առաջին հրատարակութիւնները կը դատապարտվեն հանգստութեան գրավաճառանոցներում և գրադարանների դարակներում:

Այս տողերը ցոյց են տալիս, որ մեր արտայայտած կարծիքը միայն մեր կարծիքը չէ: Բայց դժուար թէ Հրատարակչական Ընկերութիւնը ի նկատի ունենայ մամուլի գգուշացումը:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿՆԵՐ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

I

Անցեալները հաղորդել էի տեղիս դէպքերի մասին:

Ամիր-Թումանը այստեղից գնալով միանում է Ամիր-Մուքէրրէմի, Րաշիդ-Սուլթանի հետ և ընդհարվեց Թեհրանից եկած զօրաբանակի հետ, որին առաջնորդում էր Ամիր-Ազամը և իր տրամադրութեան տակ ունէր թնդանօթներ:

Ամիրի մարդիկ ոգևորութեամբ պատմում են իրանց փառաւոր յաղթանակի մասին:

Իսկութիւնը սակայն այն է, որ կռիւը բաւականին թանգ է նստել երկու կողմին էլ: Սպանվել է բախտիարցիներից Զրաղ-Ալի-խանը: Կռիւը տեղի է ունեցել ապառաժներով և անտառներով շրջապատված մի կիրճում, որտեղ առաջուց դիրք են մըտած եղել Ամիրի մարդիկ:

Ամիր-Ազամը, տեսնելով որ անկարելի է անցնել այդ կիրճով, վերադարձել է Թեհրան:

Ամիրներն էլ իրանց յաղթող հանդիսացած համարելով վերադարձան Բարֆրուշ, թողնելով դիրքերում մարդիկ:

Ամիրներից առաջ անսպասելի կերպով Բարֆրուշ ժամանեց Սարդար-Ասադն իր հեծելագնդով, որից յետոյ եկան Ամիր-Մուքէրրէմը, Ամիր-Թումանը, Րաշիդ-Նիզամը և ուրիշները:

Առ այժմ բոլորն էլ հաւաքված Բարֆրուշում նստած են: Նրանց մասին, մանաւանդ Սարդար-Ասադի, ամեն տեսակ կարծիքներ են յայտնում, որոնց վերաբերմամբ, սակայն, հաստատ ոչինչ ասել չէ կարելի, որովհետև իրանք էլ իսկապէս չը գիտեն իրանց անելիքը. միայն այսքանը կարելի է ասել, որ նրանցից իւրաքանչիւրը միւսի վերաբերմամբ ղեկավարվում է բացառապէս իր անձնական նեղ հաշիւներից:

Տեղիս նախկին դատաւոր Նիզամ-Սուլթանին ամիրները պահել են պատանդ, որին շուտով Բարֆրուշ կը բերեն: Ասում են, որ Սարդար-Ասադը աշխատում է նրան ազատել:

Երկպառակութիւն կայ ժողովրդի մէջ: Սարեյի ժողովուրդն իր շրջակայքով յայտնել է, որ չի միանայ ամիրներին: Իսկ եթէ սրանք փորձեն Սարի գնալ, կը հանդիպեն խիստ դիմադրութեան:

Քաղաքիս կողմից ամեն օր երեկոյեան հեռագրատուն են հաւաքվում տեղիս աչքի ընկնող հոգևորականները և բանակցում Թեհրանի հետ, բայց բանակցութիւնը առայժմ ոչ մի արդիւնք չէ ունեցել:

Ամիրների մարտիկները բաւականին մեծաթիւ և լաւ զինված են. ձիաւորներն իրանց քաղաքում պահում են զսպված, իսկ գիւղօրայքը մատնված է ալան-թալանի:

Ցամառ լուրեր են պտտում, որ շուտով Թեհրանից կը հասնի մի զօրախումբ, որին ամեն կողմից օգնութեան պիտի գան զօրամասեր՝ ամիրներին բռնելու համար:

Երթևեկութիւնը ամեն տեղի հետ կտրված է. պօստը չէ գործում Թեհրանի հետ:

Էլ-Դօն

II

Րաշտ, 15 հոկտեմբերի

Վերջերս Րաշտում մեծ իրարանցում ընկաւ հայերի շրջանում, երբ թէ հայ-թուրքական ընդհարում է լինելու և կոտորած է առաջանալու: Եւ այդ լուրերը այնքան յաճախ էին ասվում, որ մարդ ակամայից հաւատում էր: Եւ եղան այնպիսի ընտանիքներ, որոնք երկիւղ կրելով հեռացան Րաշտից Կովկաս: Իսկ այստեղ մնացածները ահ ու դողով սպասում էին սարսափելի րօպէներին:

Եւ այս բոլորի արդիւնքն էր մեր յեղափոխականների անտակտ գործունէութիւնը, որը մինչև անգամ պարսից թերթերում նկատողութեան նիւթ է դարձել:

«Գիլան» թերթը գրում է, թէ վերջերս մի խումբ հայեր ուզում էին ներքին խռովութիւններ առաջ բերել և այլն:

Սամ-Կան

ՇՈԳԵՆԱՒ ՎԱՆԻ ԾՈՎԻ ՎՐԱ

Վերջապէս՝ Վասպուրականի ազգաբնակութեան տարիներից ի վեր փայփայած ցանկութիւնը կատարվել է:

Սեպտ. ամսում մի փոքրիկ շոգենաւ սկսել է գործել Վանի ծովակին վրա, մէջն առնելով Վանի վալի Բէքիր-բէյին, քաղաքագլուխ Պետրոս էֆ. Գափամաճեանին, եւրոպական պետութիւնների հիւպատոսներին և այլ աստիճանաւորների, որոնք այցելել են ծովափնեայ բոլոր կենտրոնատեղերը:

Շոգենաւի ամենագլխաւոր պարագաները դեռ մի տարի առաջ՝ միսիօնար Ըշըրի յանձնարարութեամբ պատրաստվել է Ամերիկայի մի գործարանում:

Վանի ծովակը իր շուրջն ունի նահանգի ամենագլխաւոր գաւառները, որպիսիք են Բերկրի, Քաջբերունիք կամ Արճէշ, Բզնունիք կամ Ալջավազ, Վերին և Ստորին Մշտունեաց երկիր: Առաջին երեքը յայտնի են իրանց լիառատ ցորենի արտադրութեամբ և վերջինը փայտի և ատաղձի մատակարարութեամբ. այնպէս որ ազգաբնակութիւնը շոգենաւի արագ շրջագայութեամբ՝ ազատվում է այն մեծ արգելքներից, որոնք յետ էին կասեցնում նրան իր շատ անհրաժեշտ կարիքը լրացնելու: Բացի այս՝ մօտաւոր յարաբերութիւն պիտի ունենայ Էրզրումի, Մուշի և Բիթլիսի նահանգի այլ կենտրոնների հետ:

Այս գովելի ձեռնարկութեան մէջ աւելի եռանդ է ցոյց տուել Պետրոս Գափամաճեան. նա թէ որպէս բնակավայրի գործօն զաւակ և թէ որպէս քաղաքագլուխ ջանում է երկրի տնտեսութեան մէջ աւելի դիւրութիւններ մտցնել իրան համախոհ գտնելով նահանգապետ Բէքիր-բէյին:

Ինչպէս հաւաստի աղբիւրից տեղեկանում ենք, չը բաւականանալով միայն այդ մէկ փոքրիկ շոգենաւով, սկսվել է մեծ գումարներով բաժնորդական հանգանակութիւն, երկու աւելի մեծ շոգենաւեր պատրաստել տալու: Բաժնորդագրութեան մէջ մեծ տեղ են բռնում յայտնի Հիւնէյն փաշան, որ գործի մէջ է դրել 500 օսմ. լիրա, և Գափամաճեան ընկ. վաճառատունը, որ գործին մասնակցում է 400 լիրայով, այնպէս որ գումարը 10—15 հազար լիրայի հասցնելով, սկսելու են գործի:

Վերջապէս հին նահապետական ժամանակից մնացած անապահով առագաստաւոր նաւերին փոխարինում է շոգենաւը: Յուսալի է, որ երկրի քայքայված տնտեսական դրութիւնը փոխվի դէպի լաւը և բնավայրի ժողովուրդը, գլխաւորապէս վտարանդի հայերը, դառնան դէպի իրանց տունն ու տեղը և գտնեն իրանց հանգիստ կեանքը:

Մի այլ մասնաւոր նամակից տեղեկանում ենք, որ սկսել են Գործոթ գիւղի մօտ գտնված նաւթահորը փորփրել. դուրս բերված նաւթը մի քանի ամաններով ուղարկվել է Կ. Պօլիս քննելու: Շահագործելու իրաւունքը տրված է Ֆուադ փաշային:

Այս վերջին լուրն աւելի շահաւէտ դառնալու է ազգաբնակութեան, մանաւորապէս բանուոր դասակարգին, որն այնքան տառապում է հացի խնդրով:

Գ. Շէրենց

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌ. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

19 հոկտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Օդեսսայից եկած «Իօան Ապրիշեվ» շոգենաւի վրա երեան հանվեցին մկներ: Շոգենաւը չէզոքացրին. մկներին ոչնչացնում են:

Ֆինանսական մասնաժողովը որոշեց քըննել եկամտային հարկի օրինագիծը մինչև Ծնունդ, որպէսզի նա յանձնվի Պետական Խորհրդին մինչև նստաշրջանի աւարտումը:

Բժշկական խորհուրդը որոշեց երկաթուղային կայարաններում ալիւրի մէջ կրնճըթաւոր բզէզներ գտնվելու դէպքում ալիւրը յանձնել սանիտարական-ոստիկանական իշխանութիւններին ոչնչացնելու համար, իսկ շինութիւնները ենթարկել մանրազննին ախտահանութեան:

Երէկ 4 մարդկանցով բարձրացած զինւորական աէրօստատը 21 ժամից յետոյ իջաւ Տամբովի մօտերը: Նա բարձրացել էր 1,400 մետր:

Մի շաբաթում Բագուի նահանգում խոլերայով հիւանդացել են 6, մեռել է 1 մարդ:

ՕԴԵՍՍԱ: Այրվեց ինժեներական վարչութեան պահեստը. վնասը 120,000 րուբլու է:

Մի շաբաթում ժանտախտով հիւանդացաւ 1, առողջացան 4: Համաճարակը իր վախճանին մօտ լինելով, գլխաւոր ղեկավար Մալինովսկին մեկնեց Պետերբուրգ:

ՑԱՐԻՑԻՆ: Նահանգական դատարանը երդուեալ դատաւորների մասնակցութեամբ ազնուական Շչուկային իր հօրը, խորթ մօրը, 3 խորթ եղբայրներին և քրոջը սպանելու համար դատապարտեց 13 տարով ու չորս ամսով տաժանակիր աշխատանքների:

ՌՕՍՏՕՎ Դ/վ.: Սամարսկում մի խումբ աւազակներ 10,000 րուբլի են յափշտակել պօստային բաժանմունքից. կառավարիչը ծանր վիրաւորված է:

ՍՈՒԽՈՒՄ: Բարեգործական ընկերութիւնը բացեց ձրի պրօֆէսիօնալ դպրոց:

ԲՐԻՒՍԵԼ: Լիէժի կայարանում ընդհարվեցին 2 գնացքներ. մի մարդ սպանվեց, մի քանի հոգի վիրաւորվեցին:

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ց. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ձմեռային երթեւեկութիւն)
(Ժամերը նշանակված են Թիֆլիսի ժամանակով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է

ԲԱԳՈՒ՝ արագ № 2 գնացքը՝ 9 ժ. 28 ր. առաւ., Գանձակ է հասնում 2 ժ. 38 ր. ցեր., Եւլախ՝ 4 ժ. 18 ր. ցեր., Հաջի-Կաբուլ՝ 8 ժ. 12 ր. երեկ., Բալաջարի՝ 10 ժ. 59 ր. գիշ., Բագու՝ 11 ժ. 26 ր. գիշ.: Մարդատար № 6 գնացքը՝ 3 ժ. 35 ր. ցերեկ., Գանձակ է հասնում 9 ժ. 56 ր. երեկ., Եւլախ՝ 12 ժ. 7 ր. գիշերվայ, Հաջի-Կաբուլ՝ 4 ժ. 49 ր. գիշ., Բալաջարի 8 ժ. 13 ր. առաւօտ., Բագու՝ 9 ժ. 7 ր. առաւ.: Պօստատար № 4 գնացքը՝ 10 ժ. 25 ր. գիշ., Գանձակ է հասնում 4 ժ. 47 ր. գիշ., Եւլախ՝ 7 ժ. 3 ր. առաւ., Հաջի-Կաբուլ՝ 12 ժ. 11 ր. ցեր., Բալաջարի՝ 3 ժ. 53 ր. ցեր., Բագու՝ 5 ժ. 21 ր. երեկ.: Խառն գնացքը՝ IV կարգի վագոններով ըստ հարկի կարեւորութեան՝ 4 ժ. 18 ր. գիշ., Գանձակ է հասնում 12 ժ. 48 ր. ցեր., Եւլախ՝ 4 ժ. ցեր. Հաջի-Կաբուլ՝ 11 ժ. 39 ր. գիշ., Բալաջարի՝ 4 ժ. 31 ր. գիշ., Բագու՝ 5 ժ. 22 ր. առաւօտեան:

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆ՝ պօստատար № 74/75 12 ժ. 41 ր. գիշ., Ալէքսանդրօպօլ է հասնում 11 ժ. 41 ր. առ., Էջմիածին կայար.՝ 5 ժ. 18 ր. ցեր. Երևան (առանձին գնացք Ուլուխանլուից յարմարեցված այս գնացքին)՝ 7 ժ. 11 ր. երեկ., Նախիջևան՝ 11 ժ. 21 ր. գիշ., Ջուլֆա՝ 1 ժ. 5 ր. գիշ.: Մարդատար-ապրանքատար № 78/79 գնացքը՝ 4 ժ 33 ր. ցեր., Ալէքսանդրօպօլ է հասնում 3 ժ. 31 ր. գիշ., Էջմիածին կայար. 9 ժ. 3 ր. առաւօտեան, Երևան՝ 10 ժ. 34 ր առ., և սրանից դէնը այլևս չէ գնում: Խառն գնացք IV կարգի վագոններով ըստ հարկի կարեւորութեան № 108/109 5 ժ. 48 ր. գիշ., Ալէքսանդրօպօլ է հասնում 7 ժ. 20 ր. երեկ., Էջմիածին կայարան՝ 1 ժ. 30 ր. գիշ., առանց Երևան մտնելու, Նախիջևան՝ 9 ժ. 49 ր. առաւ., Ջուլֆա՝ 11 ժ. 58 ր. ցերեկ.:

ԲԱԹՈՒՄ՝ մարդատար № 5 գնացքը՝ 8 ժ. 10 ր. առաւ., Միխայլօվօ է հասնում 12 ժ. 18 ր. ցեր., Բաթում՝ 9 ժ. 20 ր. երեկ.: Պօստատար № 3 գնացքը՝ 2 ժ. 9 ր. ցեր., Միխայլօվօ է հասնում 6 ժ. 18 ր. երեկ., Բաթում՝ 4 ժ. 28 ր. գիշ.: Մարդատար № 7 գնացքը՝ 11 ժ. 53 ր. գիշ., Միխայլօվօ է հասնում 3 ժ. 53 ր. գիշ., Բաթում՝ 1 ժ. 26 ր. ցեր.: Խառն գնացք № 107 ըստ հարկի կարեւորութեան՝ 1 ժ. 5 ր. գիշ., Միխայլօվօ է հասնում 6 ժ. 54 ր. առաւ., Բաթում՝ 8 ժ. 33 ր. երեկ.:

ԲՈՐԺՈՄ՝ մարդատար № 9/66 գնացքը՝ 3 ժ. 28 ր. ցեր., Գօրի է հասնում 6 ժ. 8 ր. երեկ., Միխայլօվօ՝ 7 ժ. 43 ր. երեկ., Բօրժօմ՝ 9 ժ. 8 ր.:

ԹԻՖԼԻՍ Է ՀԱՍՆՈՒՄ

ԲԱԳՈՒԻՑ՝ մարդատար № 5 գնացքը՝ 7 ժ. 25 ր. առաւօտեան: Պօստատար № 3՝ 1 ժ. 9 ր. ցեր.: Արագ № 1 գնացքը՝ 10 ժ. 55 ր. գիշ., որ այլևս դէնը չէ գնում: Խառն գնացքը IV կարգի վագոններով 12 ժ. 3 ր. գիշ.:

ԲԱԹՈՒՄԻՑ՝ մարդատար № 6 գնացքը՝ 2 ժ. 46 ր. ցերեկ.: Պօստատար № 4 գնացքը՝ 9 ժ. 25 ր. գիշ.: Մարդատար № 8 գնացքը՝ 8 ժ. 45 ր. առաւ., որ դէնը այլ ևս չէ գնում: Խառն գնացքը IV կարգի վագոններով 3 ժ. 16 ր. գիշ.:

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆԻՑ՝ պօստատար № 72/73 գնացքը՝ 6 ժ. 36 ր. առաւ.: Մարդատար-ապրանքատար՝ № 80/81 գնացքը՝ 7 ժ. 1 ր. առաւ.: Խառն գնացքը IV կարգի վագոններով՝ 10 ժ. երեկ.:

ԲՕՐԺՕՄԻՑ՝ մարդատար № 61/10 գնացքը՝ 7 ժ. 35 ր առաւօտ.:

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ.—Արագ գնացքները (№ 2՝ Թիֆլիս-Բագու և № 1՝ Բագու-Թիֆլիս) առանց փոփոխելու գնում են մինչև Ռօստով և յետ դառնում, անպատճառ մտնելով Բագու՝ ամբողջ կազմով և բոլոր տեղերը պլաց-կարտով են: Այս գնացքներում կայ Միջազգային Ընկերութեան մի միքստ I/II կարգի վագօն, որ առանց իջեցնելու հաղորդակցում է Թիֆլիս-Բագու-Մոսկվա՝ աւելացված վճարով (1000 վերստը I կարգի վագօնում 8 ր., II կարգի՝ 6 ր.):

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վորոնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.:
Կ. Մ. ՉԻԿՕՎԱՆԻ—9½—11 ժ. աչքի, ներքին և նեարդային:
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.:
Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.:
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ., վիրաբուժութեան և միզասեռ. հ.
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.:
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Պ. Ս. ԶԻԼԲԵՐՇԱՑ—12½—1½ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.:
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հիւ.:
Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—1½—2 ժ. ներքին և երեխայոց հ.
ԵՐԵԿՈՆԵՐԸ՝
ԿԻՆ ԲԺԻՇԿ Պ. Ս. ԶԻԼԲԵՐՇԱՑ—6—6½ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.:
Ի. Ֆ. ՄԱՐՑԻՆԿԵՎՍԿԻ—6—7 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.:
Վճարը 50 կ.: Չքաւորները ձրի: Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
103. 0—111

ԲԺԻՇԿ
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ
ՆԵՐՔԻՆ ԵՒ ԵՐԵԽԱՅՈՑ
ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
առանձնապէս ՍՏԱՄՈՔՍԻ և ԱՂԻՔՆԵՐԻ
հիւանդութիւններ:
Ընդունելութիւն ամեն օր { 10—11 ժ. առ. (երեխաներ) / 5—7 ժ. երեկ. (բոլորին)
Միքայէլեան փող., № 36. Տէլէֆօն № 388.
(Ե.Հ.Կ.) 909. 100—33

ԲԺԻՇԿ
Ե. Ի. ՄԻՆԱՍԵԱՆՑ
Ներքին, երեխայոց և ստամոքսա-աղիքային հիւանդութիւններ:
Պրօֆ. Mathieu-ի մասնագիտական կլինիկայից՝ Պարիզում:
Ընդունելութիւն { առաւ. ժ. 9—11. / երեկ. ժ. 5—7.
Ելիզավետինսկայա փող. № 39.
(ա. օ.) 1179. 100—5

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳԲԷԳԵԱՆ
Աչքի հիւանդութիւններ
Ընդունելութիւնը ամեն օր
Առաւօտեան ժամը 10—1
Երեկոյեան ժամը 5—7
Վելյամինովսկայա փող. № 8
(կ. հ.) 564. 100—54

ՖԵԼԴՇԵՐԱԿԱՆ ԿԱԲԻՆԵՏ
ՄԵԴԻՑԻՆԱՅԻ
ՖԵԼԴՇԵՐ-ՄԱՍՍԱԺԻՍՏ
Ա. Գ. ԵՍԱՅԵԱՆ
Կատարում է սրսկումներ, վէրքի փաթթումն, ջերմը քսումն (втираніе) և այլն: Բժշկութիւն տուժողների սեռական թուլութեան, անկարողութեան, սերմնահոսութեան եւ երազախաբի: Մասսաժ ելեկտրական և ձեռքով: Բժշկական մարմնամարզութիւն: Օտարերկրեայ հիւանդներին տալիս է խորհուրդներ և ցոյց է տալիս հմուտ մասնագէտ բժիշկների—վեներական, ներքին և այլ հիւանդութիւնների: Ընդունելութիւնը 3—4½ ժամը ամեն օր: Չքաւորներին ձրի միմիայն չորեքշաբթի օրերը: Վորոնցովի արձանի մօտ,
Семеновская ул. № 9.
(կ. հ.) 913. 50—21

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԵՂԲ. ԱՎՍԱՐԳԻՍՕՎՆԵՐԻ
այգին բաց է Թողնում արտասահմանեան, ռուսական և տեղական լաւ տեսակի պտղատու ծառեր ու դէկօրատիվ բոյսեր:
Հասցէն՝ Ст. Скра (Зак. ж. д.)
Կատալօգն ուղարկվում է ձրի.
(կ. հ.) 1068. 15—13

Լոյս տեսաւ
Մեդիցինայի ֆելդշեր Ա. Եսայեանի
ՏՂԱՄԱՐԴԻ ՏՐԻՊԵՐԸ
(սուսունակ)
ԵՒ ՆՐԱ ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ
նկարներով, գինը 20 կոպ.: Գիրքը անհրաժեշտ է բոլոր տղամարդկանց համար. պարունակում է բազմաթիւ խորհուրդներ և նորագոյն բէցէպտներ սուսունակից ընդմիշտ բժշկվելու համար: Ծախվում է բոլոր գրավաճառանոցներում և հեղինակի մօտ՝ Թիֆլիս, Սեմեօնովսկայա № 9. Գումարով (100-ից ոչ պակաս) հեղինակը տալիս է 40% զեղչ: Ապառիկ պահանջները չեն կատարվի:
(օ. մ.) 1170. 5—5

ԹԱՏՐՈՆ ԻԼԼԻՒԶԻՕՆ.



Եթէ Դուք ցանկանում էք Ձեր ազատ ժամերն անցկացնել զուարճալի և օգտաւէտ, դրա համար չարժէ տնից դուրս ելնել, ինչու որ բերել տալով մեր պահեստից կինէմատօգրաֆիական իսկական ապարատ (որը խնդրում ենք չը շփոթել վաճառքի հանված այլ խաղալիք-ապպարատների հետ), Դուք կարող էք, չը խանգարելով Ձեր սարք ու կարգը, դարձնել Ձեր տունը Թատրօն-Իլլիւզիօն, ձեռայինների և հիւրերի համար սարքելով ներկայացումներ շարժական կենդանի պատկերներից՝ վերցված զանազան օպերաներից, դրամաներից, կոմեդիաներից, երգիծաբանական տեսարաններից և այլն. որի համար և մեզ մօտ կան մեծ քանակութեամբ բազմաբովանդակ ժապաւէններ՝ ապպարատի համար: Միայն մեր ապպարատները, որ զանազանվում են իրանց առանձնակի կօնստրուկցիայով, առաջացնում են ցանկալի էֆֆէկտ՝ առանց շարժումների՝ էկրանի վրա, 2×2 արշ. մեծ.: Մեր ապպարատները յարմարեցված են ամեն տեսակ լուսաւորութեան, որի համար և նրանց հետ վարվելու աչքի ընկնող դիւրութիւնը առիթ է տալիս աւելորդ համարել նախնական պատրաստութիւն ունենալու պահանջը: Որպէսզի այդօրինակ Թատրոնի սարքումը կարելի լինի հանրամատչելի դարձնել և հռչակել մեր ֆիրման Ռուսաստանում, մենք նշանակել ենք առասպելական էժան գներ. ապպարատ «ԻԴԵԱԼ» իր բոլոր պատկանելիքներով, «Իսկրա» լամպով, րէֆլէկտօրով, 4 երկար ժապաւէններով՝ 250 պատկերներով—8 ր. 25 կ.: Այդ ձևի ապպարատ՝ «ԻԴԵԱԼ», մեծ դիրքով, ամենալաւ օբիէկտիվով և շատ շքեղ, 3 զանազանագոյն և 3 լուսանկարչական ժապաւէններով, «Դիանա» լամպով—13 ր. 50 կ.: Ապպարատ «ՀԵՐՔՈՒԼԷՍ» ամենամեծ տիպի, երկու անիւներով 300 արշ. երկարութեամբ ժապաւէնների համար, մեխանիկական օբիէկտիվով, 5 օպտիկ ապակիներով, «Բլէսկ» յայտնի լամպով, 6 հատ բազմագոյն և 6 հատ լուսանկարչական ժապաւէններով, Էդիսօնի պէրֆօրացիայով—28 ր. 50 կ.: Պահեստի ժապաւէններ՝ 75 կ., 1 ր., 1 ր. 25 կ. և 2 ր. հատը: Պատուէրները կատարվում են վերադիր վճ.: Ճանապարհածախք և մաքս հաշվում է 1 ր. 50 կ. («Հէրքուլէս» ապպարատի համար 2 ր. 50 կ.). Ասիական Ռուսաստան 1 ր. թանգ: Պատուէրներով (ռուսերէն կամ գերմաներէն լեզուով) կարելի է դիմել հետևեալ հասցէով, որը կարելի է կտրել և կպցնել ծրարին.

Торговый Домъ Х. ФИНКЕЛЬШТЕЙНЪ
Германія. БЕРЛИНЪ, ул. Кантъ 120—70.
Exporthaus H. FINKELSTEIN, BERLIN, Kantstr. 120—70.

Պատուէրների արժէքի ¼ մաս կանխավճար ուղարկողները ստանում են իբրև պրէմիա [illegible] գեղարուեստական 100 հատ բացիկներ:
(B. 75993) 1185. 1—1

[illegible]

Թիֆլիսի գրասենեակը
յայտնում է պ. պ. գնորդներին, որ ստացված է ՇԱՔԱՐ [illegible]
Խարկովեան Շաքարո-Ռաֆինադ Գործարանի
Ընկերութեան
Հասցէն. Тифлисъ, Фрейлинская, д. № 3. Телеф. 567. А. Г. СНѢЖКОВЪ.
Պահեստ Վելյամինովսկայա փող. № 12.
(օ. մ.) 1072. 10—6

Типографія „Экономія“ Большая Ванская № 3.